

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Մաքսային միության
հանձնաժողովի 2011 թվականի
հուլիսի 15-ի թիվ 710 որոշմամբ

ՄՄ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Երկաթուղային շարժակազմի անվտանգության մասին

(ՄՄ ՏԿ 001/2011)

Բովանդակություն

Հոդված 1. Կիրառության ոլորտը	4
Հոդված 2. Սահմանումները	5
Հոդված 3. Շուկայում շրջանառության կանոնները	14
Հոդված 4. Անվտանգության պահանջները	14
Հոդված 5. Անվտանգության պահանջներին համապատասխանության ապահովումը	46
Հոդված 6. Համապատասխանության գնահատումը	47
Հոդված 7. Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով մակնշումը	77
Հոդված 8. Պաշտպանության մասով վերապահումը	78
Հավելված 1 Ցանկ երկաթուղային շարժակազմի եվ դրա բաղկացուցիչ մասերի.	80
Հավելված 2 Ցանկ սերտիֆիկացման ենթակա երկաթուղային շարժակազմի	86
Հավելված 3 Ցանկ սերտիֆիկացման ենթակա երկաթուղային շարժակազմի բաղկացուցիչ մասերի	88
Հավելված 4 Ցանկ երկաթուղային շարժակազմի այն բաղկացուցիչ մասերի, որոնք սեփական ապացույցների եվ սերտիֆիկացման մարմնի եվ (կամ) հավատարմագրված փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) մասնակցությամբ ձեռք բերված ապացույցների հիման վրա ենթակա են համապատասխանության հայտարարագրման	91
Հավելված 5 Ցանկ սեփական ապացույցների հիման վրա համապատասխանության հայտարարագրման ենթակա երկաթուղային շարժակազմի բաղկացուցիչ մասերի	94

Հավելված 6 Ցանկ արտադրանքի սերտիֆիկացման սխեմաների.....	95
Հավելված 7 Ցանկ «Երկաթուղային շարժակազմի անվտանգության մասին» ՄՄ տեխնիկական կանոնակարգի՝ երկաթուղային շարժակազմի սերտիֆիկացման դեպքում կիրառվող առանձին դրույթների	100
Հավելված 8 Ցանկ «Երկաթուղային շարժակազմի անվտանգության մասին» ՄՄ տեխնիկական կանոնակարգի՝ երկաթուղային շարժակազմի բաղկացուցիչ մասերի համապատասխանության պարտադիր հավաստման դեպքում կիրառվող առանձին դրույթների	104
Հավելված 9 Ցանկ արտադրանքի համապատասխանության հայտարարագրման սխեմաների.....	111

Հոդված 1. Կիրառության ոլորտը

1. Մաքսային միության (այսուհետ՝ ՄՄ) սույն Տեխնիկական կանոնակարգը տարածվում է նոր մշակվող (արդիականցվող), պատրաստվող այն երկաթուղային շարժակազմի եւ դրա բաղկացուցիչ մասերի վրա, որոնք շրջանառության մեջ են դրվում ՄՄ մաքսային տարածքում 1520 մմ ռելսամեջի լայնությամբ ընդհանուր եւ ոչ ընդհանուր օգտագործման երկաթուղային ուղիների վրա՝ ներառյալ մինչեւ 200 կմ/ժ շարժման արագությամբ օգտագործվելու համար:

Երկաթուղային շարժակազմն իր մեջ ներառում է՝

- 1) գնացքաքարշերը.
- 2) շարժիչավագոնային շարժակազմը եւ դրա վագոնները.
- 3) գնացքաքարշային ուղեւորատար վագոնները (այսուհետեւ՝ ուղեւորատար վագոններ).
- 4) բեռնատար վագոնները.
- 5) հատուկ երկաթուղային շարժակազմը:

ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջները տարածվում են տեխնիկական կանոնակարգման օբյեկտների վրա՝ 1-ին հավելվածով սահմանված ցանկին համապատասխան:

2. ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջները պարտադիր են երկաթուղային շարժակազմի եւ դրա բաղկացուցիչ մասերի նախագծման եւ արտադրման, ինչպես նաեւ արտադրանքի համապատասխանության գնահատման համար:

ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգը չի տարածվում կազմակերպությունների տեխնոլոգիական երկաթուղային տրանսպորտի այն երկաթուղային շարժակազմի վրա, որը նախատեսված է այդ կազմակերպությունների տարածքում մարդկանց ու նյութական արժեքների տեղափոխման եւ այդ կազմակերպությունների սեփական կարիքների համար

երկաթուղային շարժակազմի գործարկման եւ փակման գործողություններ իրականացնելու համար:

Երթեւեկության անվտանգության ապահովման մասով երկաթուղային շարժակազմի շահագործմանը ներկայացվող պահանջները սահմանվում են ՄՄ անդամ պետությունների երկաթուղային տրանսպորտի մասին օրենսդրությամբ:

3. ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգով սահմանվում են երկաթուղային շարժակազմին եւ դրա բաղկացուցիչ մասերին ներկայացվող պահանջներ՝

մարդու կյանքի եւ առողջության, կենդանիների ու բույսերի պաշտպանության, գույքի պահպանության, ինչպես նաեւ դրա նշանակությանը եւ անվտանգությանը վերաբերող՝ սպառողներին (օգտագործողներին) մոլորեցնող գործողությունների կանխարգելման նպատակով:

Հոդված 2. Սահմանումները

ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգում կիրառվում են հետեւյալ եզրույթները եւ դրանց սահմանումները՝

վթարային քրեչ–համակարգ՝ երկաթուղային շարժակազմի սարքվածք, որն ուղղված է երկաթուղային շարժակազմի բախման եւ (կամ) ռելսերից արտանկման դեպքում սպասարկող անձնակազմի եւ (կամ) ուղեւորների վնասվածք ստանալու ռիսկի կանխմանը կամ նվազմանը.

գնացքաքարշային ավտոմատ ազդասարք՝ սարքվածքների ամբողջություն, որը նախատեսված է ճանապարհային այն լուսացույցների ազդանշանները մեքենավարի խցիկ փոխանցելու համար, որոնց մոտենում է երկաթուղային շարժակազմը.

ավտոմատ արգելակ՝ սարքվածք, որն ապահովում է գնացքի ավտոմատ կանգառումը օդախողովակային մայրուղու բաժանման կամ խզման եւ (կամ)

արտակարգ արգելակման ծորանի (կանգառ-ծորակի) բացման դեպքում.

Երկաթուղային շարժակազմի անվտանգություն՝ երկաթուղային շարժակազմի վիճակ, երբ բացակայում է քաղաքացիների կյանքին կամ առողջությանը, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գույքին, պետական կամ մունիցիպալ գույքին, ինչպես նաև շրջակա միջավայրին, կենդանիների և բույսերի կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու հետ կապված անթույլատրելի ռիսկ.

Չրջանառության մեջ դնելը՝ արտադրանքի կենսական պարբերաշրջանի փուլ պատրաստումից մինչև շահագործման հանձնելը.

Երկաթուղային շարժակազմի եզրաչափք՝ ուղու առանցքին ուղղահայաց լայնակի ուրվագիծ, որի մեջ առանց դուրս գալու պետք է տեղավորվի ինչպես բեռնված, այնպես էլ ուղիղ հորիզոնական ուղու վրա տեղակայված (ռելսամեջի առավել անբարենպաստ դիրքի եւ զսպանների վրա կողային թեքությունների ու դինամիկական տատանումների բացակայության դեպքում) դատարկ երկաթուղային շարժակազմը, որն ունի նաև առավելագույն նորմավորվող մաշվածքներ.

բեռնատար վագոններ՝ բեռների փոխադրման համար նախատեսված վագոններ, ինչպիսիք են՝ ծածկված վագոններ, կիսավագոններ, կառամատույցներ, վագոն-ցիստեռներ, բունկեր տիպի վագոններ, իզոթերմիկ վագոններ, հացահատիկատար մեքենաներ, փոխակրիչներ, բեռնարկղատարեր, բեռնային տիպի վագոններ.

անվտանգության ապացույց՝ արտադրանքի անվտանգության մասին փաստաթուղթ, որը պարունակում է արտադրանքի՝ նորմատիվային, նախագծային եւ կոնստրուկտորային փաստաթղթերով սահմանված անվտանգության պահանջներին համապատասխանության ապացույցների, եւ արտադրանքի անվտանգության ցուցանիշների՝ թույլատրելի արժեքներին համապատասխանության ապացույցների ամբողջություն.

թույլատրելի ռիսկ՝ արտադրողի տեխնիկական ու տնտեսական հնարավորություններից կախված երկաթուղային շարժակազմի եւ դրա բաղկացուցիչ մասերի կիրառմամբ պայմանավորված ռիսկի արժեք, որը համապատասխանում է արտադրանքի կյանքի պարբերաշրջանի բոլոր փուլերում ապահովվող անվտանգության մակարդակին.

երկաթուղային շարժակազմի միավոր՝ երկաթուղային շարժակազմի առանձին օբյեկտ, ինչպիսիք են՝ գնացքաքարշը, բեռնատար ու ուղետրատար վագոնը, շարժիչավագոնային շարժակազմը (կամ դրա հատվածամասերը, վագոնները), հատուկ երկաթուղային շարժակազմը.

ընդհանուր օգտագործման երկաթուղային ուղիներ՝ երկաթուղային կայարանների տարածքներում երկաթուղային ուղիներ, որոնք բաց են գնացքների ընդունման եւ ուղարկման, բեռների, ուղեբեռների եւ բեռնաձանրոցների ընդունման եւ հանձնման, ուղետրոների սպասարկման եւ տեսակավորման ու մանևրային աշխատանքների համար գործողությունների իրականացման, ինչպես նաեւ այն երկաթուղային ուղիները, որոնք միացնում են նշված կայարանները.

ոչ ընդհանուր օգտագործման երկաթուղային ուղիներ՝ երկաթուղային մերձատար ուղիներ, որոնք անմիջականորեն կամ այլ երկաթուղային մերձատար ուղիների վրայով սահմանակցում են ընդհանուր օգտագործման երկաթուղային ուղիներին եւ նախատեսված են առանձին օգտագործողների՝ պայմանագրի պայմանների հիման վրա երկաթուղային տրանսպորտի ծառայությունների մատուցման կամ սեփական կարիքների նպատակով աշխատանքների իրականացման համար.

արտադրանքի նույնականացում գործընթաց, որի միջոցով որոշվում է այդ արտադրանքի համապատասխանությունը տեխնիկական փաստաթղթերին.

իզոթերմիկ վագոններ՝ ծածկված, ջերմամեկուսացմամբ վագոններ, որոնք նախատեսված են այնպիսի բեռների փոխադրման համար, որոնց դեպքում

անհրաժեշտ է որոշակի ընդգրկույթուն պահպանել բեռի ջերմաստիճանը դրա առաքումից հետո սահմանափակ ժամանակահատվածի ընթացքում.

նորարարական արտադրանք՝ արտադրանք, որի թե՛ տեխնոլոգիական բնութագրերը (ֆունկցիոնալ հատկանիշները, կոնստրուկտիվ կատարումը, լրացուցիչ գործողությունները, ինչպես նաև կիրառվող նյութերի եւ բաղադրիչների կազմը) եւ թե՛ ենթադրյալ օգտագործումը համարվում են սկզբունքորեն նոր կամ էապես տարբերվում են նախկինում արտադրվող արտադրանքի անալոգից.

տեսչական հսկողություն՝ համապատասխանության ստուգիչ գնահատում, որն իրականացվում է հաստատելու համար, որ արտադրանքը շարունակում է համապատասխանել սերտիֆիկացման ժամանակ հաստատված՝ ՄՄ տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջներին.

մեքենավարի խցիկ՝ երկաթուղային շարժակազմի թափքի՝ միջնապատերով առանձնացված մասը, որտեղ տեղակայված են գնացքաքարշի բրիգադի աշխատանքային տեղերը, գնացքաքարշի, շարժիչավագոնային շարժակազմի, հատուկ երկաթուղային շարժակազմի կառավարման համար նախատեսված սարքերը եւ սարքվածքները.

երկաթուղային շարժակազմի նախագծային արագություն՝ նախագծման համար ներկայացվող տեխնիկական փաստաթղթերով սահմանված առավելագույն արագություն.

արտակարգ արգելակման ծորան (կանգառ-ծորակ)՝ արգելակման ծորան, որը ծառայում է արտակարգ կանգառում պահանջվելու դեպքում երկաթուղային շարժակազմի արգելակային մայրուղուց օդը բաց թողնելու եւ ավտոմատ արգելակները գործողության մեջ դնելու համար.

գնացքաքարշ՝ երկաթուղային շարժակազմ, որը նախատեսված է երկաթուղային ուղիներին վագոնների կամ առանձին վագոնների տեղաշարժման համար.

մագնիսառելսային արգելակ՝ սարքվածք, որն ստեղծում է արգելակային ճիգ՝ էլեկտրամագնիսական ձգողականության միջոցով արգելակի կալունը դեպի ռելսերը ձգելով:

երկաթուղային շարժակազմի արդիականացում գոյություն ունեցող երկաթուղային շարժակազմի տեխնիկատնտեսական բնութագրերի բարելավման ուղղությամբ իրականացվող համալիր աշխատանքներ դրա բաղադրիչ մասերն ավելի արդիական մասերով փոխարինելու միջոցով:

երկաթուղային շարժակազմի արդիականացում ծառայության ժամկետի երկարաձգմամբ՝ գոյություն ունեցող երկաթուղային շարժակազմի տեխնիկատնտեսական բնութագրերի բարելավման ուղղությամբ իրականացվող համալիր աշխատանքներ ծառայության ժամկետը երկարաձգելու համար հիմնական կոնստրուկցիայի մեջ փոփոխություններ կատարելու միջոցով:

շարժիչավազոնային շարժակազմ՝ մոտորային եւ ոչ ինքնաշարժ վազոններ, որոնցից կազմվում են ուղետրների եւ (կամ) ուղեբեռի, փոստի փոխադրման համար նախատեսված էլեկտրագնացքները, դիզելային գնացքները, ավտոմատրիսները, ռելսային ավտոբուսները, դիզելային էլեկտրագնացքները, էլեկտրամատրիսները:

նախատեսված ռեսուրս՝ արտադրանքի աշխատանքի գումարային տեսողությունը, որը լրանալուց հետո արտադրանքի շահագործումը պետք է դադարեցվի՝ անկախ այն հանգամանքից, թե ինչպիսի տեխնիկական վիճակում է այն գտնվում:

ծառայության նախատեսված ժամկետ՝ արտադրանքի շահագործման օրացուցային տեսողությունը, որը լրանալուց հետո արտադրանքի շահագործումը պետք է դադարեցվի՝ անկախ այն հանգամանքից, թե ինչպիսի տեխնիկական վիճակում է այն գտնվում:

պահպանման նախատեսված ժամկետ՝ արտադրանքի պահպանման օրացուցային տեսողությունը, որը լրանալուց հետո արտադրանքը չպետք է

պահվի՝ անկախ այն հանգամանքից, թե ինչպիսի տեխնիկական վիճակում է այն գտնվում.

անվտանգության հիմնավորում ռիսկի վերլուծություն, ինչպես նաև կոնստրուկտորական, շահագործման, տեխնոլոգիական փաստաթղթերից վերցված՝ անվտանգության ապահովման համար անհրաժեշտ նվազագույն միջոցների վերաբերյալ տեղեկություններ պարունակող փաստաթուղթ, որը կցվում է արտադրանքին դրա կենսական պարբերաշրջանի բոլոր փուլերում, եւ որում լրացվում են վերանորոգում կատարելուց հետո շահագործման փուլում ռիսկերի գնահատման արդյունքների մասին տեղեկությունները.

ռիսկի գնահատում նախապես սահմանված չափանիշների հետ ռիսկի վերլուծված մակարդակների համեմատման գործընթաց, ինչպես նաև այն ոլորտների բացահայտում, որտեղ առկա է ռիսկի մշակման անհրաժեշտություն.

ուղեորատար վագոններ՝ ուղեորների եւ (կամ) ուղեբեռի, փոստային առաքումների փոխադրման համար նախատեսված վագոններ, ինչպիսիք են՝ փոստային, ուղեբեռային վագոնները, վագոն ռեստորանները, ծառայողական տեխնիկական, ծառայողական, ակումբ վագոնները, սանիտարական, փորձարարական եւ չափիչ լաբորատորիաները, ուղեորային տիպի հատուկ վագոնները.

անձնագիր՝ փաստաթուղթ, որը պարունակում է պատրաստողի կողմից տրամադրվող երաշխիքների, արտադրանքի հիմնական պարամետրերի ու բնութագրերի (հատկությունների) արժեքների մասին վկայող, ինչպես նաև արտադրանքի սերտիֆիկացման եւ ուտիլիզացման մասին տեղեկություններ.

օդաճնշական արգելակ՝ օդաճնշական կառավարմամբ արգելակ.

հսկողության ներքո շահագործում երկաթուղային շարժակազմի բնականոն շահագործում, որի ժամանակ իրականացվում է լրացուցիչ հսկողություն եւ հաշվի է առնվում երկաթուղային շարժակազմի տեխնիկական վիճակը.

գնացք՝ մեկ կամ մի քանի գործող գնացքաքարշերով կամ շարժիչավոր վագոններով ու տեղակայված ազդանշաններ ունեցող վագոնների ձեւավորված եւ հատուկ կազմ, ինչպես նաեւ կայարանամեջ ուղարկվող եւ կայարանամեջում գտնվող, առանց վագոնների գնացքաքարշեր եւ հատուկ ինքնագնաց երկաթուղային շարժակազմ:

սահմանային վիճակ՝ արտադրանքի վիճակ, երբ դրա հետագա շահագործումն անթույլատրելի է կամ աննպատակահարմար կամ դրա աշխատունակության վերականգնումն անհնար է կամ աննպատակահարմար:

արտադրանք՝ երկաթուղային շարժակազմ եւ (կամ) դրա բաղկացուցիչ մասերը:

ռեկուպերատիվ արգելակում էլեկտրադինամիկական արգելակի միջոցով կատարվող՝ երկաթուղային շարժակազմի արգելակում, որի դեպքում քարշային էլեկտրաշարժիչների գեներատորային ռեժիմի անցնելու ժամանակ արձակվող էլեկտրական էներգիան փոխանցվում է հպումային ցանց:

շահագործման ձեռնարկ՝ փաստաթուղթ, որը պարունակում է ինչպես արտադրանքի կոնստրուկցիայի, գործողության սկզբունքի, բնութագրերի (հատկությունների) մասին տեղեկություններ եւ ցուցումներ, որոնք անհրաժեշտ են արտադրանքի ճիշտ եւ անվտանգ շահագործման (ըստ նշանակության օգտագործման, տեխնիկական սպասարկման, ընթացիկ վերանորոգման, պահպանման եւ տրանսպորտային փոխադրման) եւ արտադրանքի վերանորոգման անհրաժեշտությունը որոշելիս դրա տեխնիկական վիճակի գնահատման համար, այնպես էլ արտադրանքի ուտիլիզացման հետ կապված տեղեկություններ:

սերտիֆիկացված արտադրանք՝ արտադրանք, որի ՄՄ տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխանության պարտադիր հավաստումն իրականացվել է սերտիֆիկացման ձեւով:

արագընթաց երկաթուղային շարժակազմ՝ գնացքաքարշերը,

ուղեւորատար վագոնները, շարժիչավագոնային շարժակազմը, որոնք նախատեսված են 141 կմ/ժամ արագությունից՝ ներառյալ մինչեւ 200 կմ/ժամ շարժման արագությամբ փոխադրումների իրականացումն ապահովելու համար.

Երկաթուղային շարժակազմի բաղկացուցիչ մաս՝ դետալ, հավաքման միավոր, համալիր կամ դրանց լրակազմ, որոնք մտնում են երկաթուղային շարժակազմի կոնստրուկցիայի մեջ եւ ապահովում են շահագործման անվտանգությունը, սպասարկող անձնակազմի եւ (կամ) ուղեւորների անվտանգությունը.

հատուկ երկաթուղային շարժակազմ երկաթուղային շարժակազմ, որը նախատեսված է երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի շինարարության, վերականգնման, վերանորոգման եւ աշխատանքի ապահովման համար եւ իր մեջ ներառում է երկաթուղային շարժասարքվածքի ոչ հանովի ինքնագնաց շարժական միավորներ, ինչպիսիք են շարժիչաքարշերը, դրեզինաները, հատուկ ավտոմատրիսները, ավտոնոմ շարժիչով եւ քարշային շարժաբերով երկաթուղային-շինարարական մեքենաները, ինչպես նաեւ երկաթուղային շարժասարքվածքի ոչ ինքնագնաց շարժական միավորները, ինչպիսիք են քարշային շարժաբեր չունեցող երկաթուղային-շինարարական մեքենաները, կցանքները եւ հատուկ երկաթուղային շարժակազմը, որը կազմում է սպասարկող գնացքի մաս եւ նախատեսված է երկաթուղային տրանսպորտի կառուցվածքների եւ սարքվածքների պահպանման, սպասարկման եւ վերանորոգման աշխատանքների իրականացման համար.

կայանման արգելակ՝ երկաթուղային շարժակազմի միավորի վրա տեղադրված ձեռքի եւ ավտոմատ շարժաբեր ունեցող սարքվածք, որը նախատեսված է կայանատեղում այն ամրացնելու համար՝ դրա ինքաբերաբար հեռանալը բացառելու, ինչպես նաեւ երկաթուղային շարժակազմի միավորի ներսում ձեռքի կամ ավտոմատ հաղորդակի առկայության դեպքում հարկադիր վթարային կանգառման նպատակով.

տեխնիկական համատեղելիություն՝ երկաթուղային շարժակազմի՝ միմյանց եւ երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի հետ փոխգործողության ունակությունը ՄՄ տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջներին համապատասխան.

երկաթուղային շարժակազմի արգելակում՝ արգելակային համակարգի կառավարման համար նախատեսված սարքերի եւ սարքվածքների վրա ազդելը՝ արագությունը իջեցնելու կամ ընթացող գնացքը կամ երկաթուղային շարժակազմի միավորը կանգնեցնելու նպատակով.

արգելակման ճանապարհ՝ արգելակային համակարգի կառավարման համար նախատեսված սարքերի եւ սարքվածքների վրա ազդելու պահից գնացքի անցած տարածությունը, այդ թվում արտակարգ արգելակման ծորանի (կանգառ-ծորակի) գործարկումից մինչեւ լրիվ կանգառումը.

տեղեկամատյան (ֆորմուլյար)՝ փաստաթուղթ, որը պարունակում է պատրաստողի կողմից տրամադրվող երաշխիքների, նշված արտադրանքի տեխնիկական վիճակն արտացոլող արտադրանքի հիմնական պարամետրերի ու բնութագրերի (հատկությունների) արժեքների մասին վկայող տեղեկություններ, արտադրանքի սերտիֆիկացման եւ ուտիլիզացման մասին տեղեկություններ, ինչպես նաեւ դրա շահագործման (աշխատանքի տեսողությունը եւ պայմանները, տեխնիկական սպասարկումը, վերանորոգումը եւ այլն) ժամանակահատվածում ներառվող տեղեկություններ.

շահագործման փաստաթուղթ՝ կոնստրուկտորական փաստաթղթեր, որոնք առանձին կամ մյուս փաստաթղթերի հետ սահմանում են արտադրանքի շահագործման կանոնները եւ (կամ) ներառում են պատրաստողի կողմից երաշխավորված արտադրանքի հիմնական պարամետրերի ու բնութագրերի (հատկությունների) արժեքների մասին վկայող տեղեկություններ, ինչպես նաեւ ծառայության սահմանված ժամկետում դրա շահագործման երաշխիքներ ու տեղեկություններ.

արտակարգ արգելակում՝ արգելակման առավելագույն ուժի իրականացման միջոցով արգելակում, որը կիրառվում է այնպիսի դեպքերում, երբ պահանջվում է գնացքի անհապաղ կանգնեցում.

էլեկտրադինամիկական արգելակ՝ սարքվածք, որում արգելակման ուժը ձեւավորվում է այն դեպքում, երբ գնացքի կինետիկական էներգիան կերպափոխվում է էլեկտրական էներգիայի քարշային էլեկտրաշարժիչների՝ գեներատորային ռեժիմի անցնելու միջոցով.

էլեկտրաօդանշիչ արգելակ՝ արգելակման համար նախատեսված սարքվածք՝ էլեկտրական կառավարմամբ օդանշիչ արգելակներով:

Հոդված 3. Շուկայում շրջանառության կանոնները

1. Երկաթուղային շարժակազմը եւ (կամ) դրա բաղկացուցիչ մասերը շրջանառության մեջ դրվում են ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգին, ինչպես նաեւ ՄՄ մյուս տեխնիկական կանոնակարգերին կամ Եվրասիական տնտեսական համայնքի (այսուհետ՝ ԵվրԱզԷՍ) տեխնիկական կանոնակարգերին դրանց համապատասխանության դեպքում, որոնց գործողությունը չի տարածվում դրանց վրա:

2. Այն երկաթուղային շարժակազմը եւ դրա բաղկացուցիչ մասերը, որոնց համապատասխանությունը ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին չի հավաստվել, չպետք է մակնշվեն ՄՄ անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով եւ չպետք է թույլատրվեն շուկայում շրջանառության մեջ դրվելու համար եւ հանձնվեն շահագործման:

Հոդված 4. Անվտանգության պահանջները

1. Հաշվի առնելով վնաս հասցնելու ռիսկի աստիճանները՝ ՄՄ սույն

Տեխնիկական կանոնակարգով սահմանում են արտադրանքին ներկայացվող նվազագույն անհրաժեշտ պայմանները, որոնց կատարման դեպքում ապահովվում են՝

- ա) ճառագայթման անվտանգությունը.
- բ) կենսաբանական անվտանգությունը.
- գ) պայթյունասանվտանգությունը.
- դ) մեխանիկական անվտանգությունը.
- ե) հրդեհային անվտանգությունը.
- զ) ջերմային անվտանգությունը.
- է) քիմիական անվտանգությունը.
- ը) էլեկտրական անվտանգությունը.

թ) էլեկտրամագնիսական համատեղելիությունը սարքերի եւ սարքավորումների աշխատանքի անվտանգությունն ապահովելու մասով.

- ժ) չափումների միասնականությունը:

2. Երկաթուղային շարժակազմի եւ դրա բաղկացուցիչ մասերի նախագծման ժամանակ ռիսկի աստիճանը պետք է գնահատվի հաշվարկային, փորձարարական եւ փորձագիտական եղանակով, ինչպես նաեւ նույնանման արտադրանքի շահագործման տվյալների հիման վրա: Ռիսկի աստիճանի գնահատման մեթոդները կարող են սահմանել ՄՄ տեխնիկական կանոնակարգին համապատասխանությունը գնահատելու (հավաստելու) նպատակով կիրառվող ստանդարտներով կամ փոխկապակցված ստանդարտների ցանկերում ներառված ստանդարտացման մյուս փաստաթղթերով (այսուհետ՝ ստանդարտներ):

3. Երկաթուղային շարժակազմի եւ դրա բաղկացուցիչ մասերի անվտանգությունը պետք է ապահովվի հետեւյալ միջոցներով՝

ա) արտադրանքի նախագծման ժամանակ գիտահետազոտական եւ փորձակոնստրուկտորական համալիր աշխատանքների իրականացում.

բ) փորձահավանության արժանացած տեխնիկական լուծումների կիրառում.

գ) արտադրանքի ծառայության նախատեսված ժամկետների եւ (կամ) ռեսուրսների սահմանում, ինչպես նաեւ տեխնիկական սպասարկման ու վերանորոգման կատարում՝ անհրաժեշտ պարբերականությամբ.

դ) փորձահավանության արժանացած մեթոդակարգի վրա հիմնված համալիր հաշվարկների կատարում.

ե) արտադրանքի նախագծման եւ արտադրման ժամանակ կիրառվող նյութերի ընտրություն՝ պայմանավորված շահագործման պարամետրերից եւ պայմաններից.

զ) արտադրանքի սահմանային վիճակների չափանիշների սահմանում.

է) արտադրանքի ուտիլիզացման պայմանների եւ եղանակների որոշում.

ը) արտադրանքի համապատասխանության գնահատման իրականացում:

4. Երկաթուղային շարժակազմը եւ դրա բաղկացուցիչ մասերն ըստ ամրության, կայունության եւ տեխնիկական վիճակի պետք է ապահովեն թույլատրելի արժեքների սահմաններում առավելագույն արագություններով ընթացող գնացքների անվտանգ երթեւեկությունը:

5. Երկաթուղային շարժակազմը եւ դրա բաղկացուցիչ մասերը պետք է ապահովեն՝

ա) երկաթուղային շարժակազմի եզրաչափքերի պահպանումը.

բ) շահագործման պայմանների կատարումը՝ հաշվի առնելով արտաքին կլիմայական ու մեխանիկական ներգործությունները.

գ) երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի եւ այդ

ենթակառուցվածքի վրա շահագործվող երկաթուղային այլ շարժակազմի հետ տեխնիկական համատեղելիությունը.

դ) ռելսից անիվի արտանկման նկատմամբ կայունությունը.

ե) ուղու կորագծային հատվածների վրա շրջվելու նկատմամբ կայունությունը.

զ) կայանատեղիից ինքնաբերաբար հեռանալը կանխելը.

է) քարշի եւ արգելակման ռեժիմներում դինամիկական ճիգերը փոխանցելու նպատակով գնացքներում կցորդումը.

ը) թույլատրելի արգելակման ճանապարհը.

թ) ուղիների բեռնվածության, ուղու վրա ներգործության սահմանային թույլատրելի ուժերի, սոնու հաշվարկային բեռնվածության չգերազանցումը.

ժ) երկաթուղային ուղու վրա երկաթուղային շարժակազմի բաղկացուցիչ մասերի անկումը կանխելը.

ժա) քարշի, արգելակման սահմանային թույլատրելի ուժերին եւ արագացման մեծություններին համապատասխանությունը.

ժբ) սանիտարահամաճարակային եւ էկոլոգիական անվտանգությունը.

ժգ) էլեկտրասարքավորումների էլեկտրամագնիսական համատեղելիությունը սարքերի եւ սարքավորումների աշխատանքի անվտանգությունն ապահովելու մասով.

ժդ) երկաթուղային ավտոմատիկայի եւ հեռուստամեխանիկայի սարքվածքների, երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքների երկաթուղային էլեկտրակապի հետ էլեկտրասարքավորումների էլեկտրամագնիսական համատեղելիությունը.

ժե) հրդեհային անվտանգության պահանջների կատարումը.

ժզ) բեռնվածության թույլատրելի ռեժիմների եւ ներգործությունների

դեպքում ամրությունը.

ժէ) երկայնական եւ ուղղաձիգ հաշվարկային դինամիկական բեռնվածության կիրառման դեպքում պլաստիկ դեֆորմացիաների բացակայությունը.

ժը) բեռնավորման սակավացիկ եւ բազմացիկ ռեժիմների դեպքում հոգնածության դիմադրությունը.

ժթ) շահագործման ռեժիմների բոլոր ընդգրկույթներում (էլեկտրամատակարարման նոմինալ եւ սահմանային ռեժիմների դեպքում) էլեկտրասարքավորումների աշխատանքի անվտանգությունը եւ հուսալիությունը.

ի) մեքենայացման միջոցների կիրառմամբ բեռնման եւ բեռնաթափման ժամանակ բեռնատար, փոստատար, ուղեբեռային վագոնների կոնստրուկցիաների անվտանգությունը.

իա) թեքուղիներից վերախմբավորման եւ (կամ) լաստանավի թեքուղային հավաքակայանից անցնելու ժամանակ վագոնների կցորդումը.

իբ) երկաթուղային շարժակազմի բաղկացուցիչ մասերի՝ իրար միջեւ եւ կոնստրուկտորական փաստաթղթերով չնախատեսված երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի տարրերի հետ հպումների բացակայությունը.

իգ) երկաթուղային ուղու կորագծային հատվածներում երկաթուղային շարժակազմի կցորդումը, ոչ ընդհանուր օգտագործման ուղիներով վագոնների՝ կցորդված եւ առանձին տեղաշարժվելու հնարավորությունը.

իդ) էներգաարդյունավետության պահանջներին համապատասխանությունը:

6. Երկաթուղային շարժակազմի եւ դրա բաղկացուցիչ մասերի նախագծման ժամանակ նախագծողը (մշակողը) պետք է ընտրի այնպիսի լուծումներ, որոնք կապահովեն ՄՄ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված մարդու, կենդանիների ու բույսերի կյանքի ու առողջության համար

վնասակար եւ (կամ) վտանգավոր ներգործությունների թույլատրելի մակարդակները:

7. Երկաթուղային շարժակազմի եւ դրա բաղկացուցիչ մասերի՝ նախագծողի (մշակողի) կողմից ընտրված կոնստրուկցիաները պետք է անվտանգ լինեն նախատեսված ծառայության ժամկետի եւ (կամ) ռետուրսի, նախատեսված պահպանման ժամկետի ընթացքում, ինչպես նաեւ դիմակայեն այնպիսի ներգործությունների եւ բեռնվածքի, որոնց կարող են դրանք ենթարկվել շահագործման ընթացում:

8. Երկաթուղային շարժակազմի եւ դրա բաղկացուցիչ մասերի նախագծման ժամանակ նախագծողը (մշակողը) երկաթուղային շարժակազմի բախման եւ (կամ) արտանկման դեպքում սպասարկող անձնակազմի եւ (կամ) ուղեւորների պաշտպանությունն ապահովելու համար պետք է նախատեսի վթարային քրեշ-համակարգեր:

9. Երկաթուղային շարժակազմի նախագծման ժամանակ նախագծողը (մշակողը) պետք է նախատեսի ծրագրային միջոցներ, որոնք կապահովեն երկաթուղային շարժակազմի եւ դրա բաղկացուցիչ մասերի աշխատանքի անվտանգությունը:

10. Երկաթուղային շարժակազմի եւ դրա բաղկացուցիչ մասերի կոնստրուկցիայում փոփոխություններ կատարելու ժամանակ չպետք է նվազեցվեն ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգով նախատեսված, նախագծման ժամանակ սահմանված անվտանգության պահանջները:

11. Երկաթուղային շարժակազմի եւ (կամ) դրա բաղկացուցիչ մասերի կոնստրուկցիայում կամ պատրաստման տեխնոլոգիայում անվտանգության վրա ազդող փոփոխություններ կատարելու դեպքում, ինչպես նաեւ ծառայության ժամկետի երկարաձգմամբ դրանց արդիականացման ժամանակ պետք է ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգի 6-րդ հոդվածով սահմանված կարգով անցկացնել արտադրանքի համապատասխանության պարտադիր հավաստում:

12. Երկաթուղային շարժակազմը եւ դրա բաղկացուցիչ մասերը պետք է ունենան լավ նշմարվող նույնականացման եւ նախազգուշացնող գրություններ եւ մականշվածք, որոնք պետք է վերարտադրվեն եւ պարզաբանվեն շահագործման ձեռնարկում:

13. Երկաթուղային շարժակազմը կոնստրուկտորական փաստաթղթերին համապատասխան պետք է ունենա հետեւյալ մականշվածքը, որն ապահովում է արտադրանքի նույնականացումը՝ անկախ դրա թողարկման տարվանից՝

ա) ՄՄ անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանը.

բ) պատրաստողի անվանում եւ (կամ) դրա ապրանքային նշանը.

գ) արտադրատեսակների անվանում եւ (կամ) սերիայի կամ տիպի նշագիրը, համարը.

դ) պատրաստման ամսաթիվը.

ե) տարայի զանգվածը.

զ) նախագծային արագությունը.

է) կատարված վերանորոգումների մասին ցուցանակը կամ գրությունը.

ը) բեռնունակությունը (բեռնատար, փոստատար եւ ուղեբեռային վագոնների համար).

թ) ուղեւորների համար նախատեսված տեղերի թիվը (ուղեւորների կամ օպերատիվ-վերանորոգման աշխատանքներ իրականացնող անձնակազմի փոխադրման համար նախատեսված երկաթուղային շարժակազմի համար):

14. Երկաթուղային շարժակազմի բաղկացուցիչ մասերը կոնստրուկտորական փաստաթղթերին համապատասխան պետք է ունենան հետեւյալ մականշվածքը, որը կապահովի արտադրանքի նույնականացումը՝ անկախ դրա թողարկման տարվանից, այդ թվում՝

ա) ՄՄ անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանը.

բ) պատրաստողի անվանում կամ դրա ապրանքային նշան, արտադրանքի անվանումը.

գ) պատրաստման ամսաթիվը:

Այն դեպքում, երբ հաշվի առնելով երկաթուղային շարժակազմի բաղկացուցիչ մասերի կոնստրուկցիայի առանձնահատկությունները մականշվածքը հնարավոր չէ անմիջականորեն զետեղել դրանց վրա, ապա թույլատրվում է, որ այն զետեղվի միայն փաթեթվածքի վրա եւ դրա մասին նշվի երկաթուղային շարժակազմի բաղկացուցիչ մասերին կից ներկայացվող շահագործման փաստաթղթերում:

15. Չափումների միասնականության ապահովման պետական կարգավորման ոլորտին առնչվող չափումների միջոցները, որոնք տեղակայված են երկաթուղային շարժակազմի վրա, ՄՄ անդամ պետությունների չափումների միասնականության ապահովման մասին օրենսդրությանը համապատասխան պետք է լինեն հաստատված տեսակի եւ ունենան ստուգաչափման նշան եւ (կամ) ստուգաչափման վկայական:

16. Երկաթուղային շարժակազմի անվազույզերը կոնստրուկտորական փաստաթղթերին համապատասխան պետք է ունենան մակնշման եւ դրոշմման նշաններ:

17. Բեռնատար վագոնների սայլակների շրջանակները եւ հեծանները կոնստրուկտորական փաստաթղթերին համապատասխան պետք է ունենան մակնշման հետեյալ ձևով նշանները՝

ա) պատրաստողի պայմանական համարը.

բ) պատրաստման տարվա վերջին երկու թվերը.

գ) պատրաստողի՝ շրջանակների եւ հեծանների համարակալման

համակարգով հերթական համարը.

դ) պողպատի մակնիշի պայմանական նշանները:

18. Բեռնատար վագոնների սայլակների շրջանակները եւ հեծանները կոնստրուկտորական փաստաթղթերին համապատասխան պետք է ունենան պատրաստողի դրոշմման նշանները, իսկ եռակցման միջոցով հենոցների եւ հեծանների դեֆեկտի շտկման դեպքում նաեւ եռակցողի դրոշմը:

19. Մեքենավարի խցիկի, ուղեւորատար վագոնների եւ շարժիչավագոնային շարժակազմի վագոնների ապակիները պետք է կոնստրուկտորական փաստաթղթերին համապատասխան ունենան հետեւյալ մականշվաձքը՝

ա) ՄՄ անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանը.

բ) պատրաստողի անվանում եւ (կամ) դրա ապրանքային նշանը.

գ) ապակու տեսակի նշագրերը.

դ) պաշտպանության դասը.

ե) սերտիֆիկացման մասին տեղեկությունները:

20. Մականշվաձքը եւ շահագործման փաստաթղթերը ձեւակերպվում են ՄՄ այն անդամ պետության պետական լեզվով, որտեղ պատրաստվել է արտադրանքը, ինչպես նաեւ ռուսերենով:

21. Երկաթուղային շարժակազմը եւ դրա բաղկացուցիչ մասերը շահագործման մեջ դնելու ժամանակ պարտադիր է շահագործման եւ վերանորոգման փաստաթղթերի լրակազմի առկայությունը:

Համապատասխանության պարտադիր հավաստման ենթակա պարտաստված արտադրանքը շրջանառության մեջ է դրվում համապատասխան շահագործման ձեռնարկների առկայության դեպքում, որոնց պահանջների եւ դրույթների

կատարումն ապահովում է դրա անվտանգ շահագործումը:

22. Երկաթուղային շարժակազմը, դրա սարքավորումների դասավորությունը եւ մոնտաժումը շահագործման, զննման, տեխնիկական սպասարկման, վերանորոգման ժամանակ պետք է ապահովեն սպասարկող անձնակազմի անվտանգությունը:

Երկաթուղային շարժակազմը պետք է ունենա հատուկ ոտնատեղեր, բռնածողեր կամ հարմարանքներ, որոնք շահագործման, զննման, տեխնիկական սպասարկման, վերանորոգման ժամանակ կապահովեն սպասարկող անձնակազմի անվտանգությունը:

23. Երկաթուղային շարժակազմի կառավարման, հսկողության եւ անվտանգության համակարգերը պետք է ապահովեն դրա աշխատունակ վիճակը աշխատանքի բոլոր նախատեսված ռեժիմներում եւ շահագործման ձեռնարկով նախատեսված բոլոր արտաքին ներգործությունների դեպքում:

Երկաթուղային շարժակազմի կառավարման եւ հսկողության համակարգերը սպասարկող անձնակազմի հնարավոր տրամաբանական սխալների դեպքում պետք է բացառեն վտանգավոր իրավիճակների ստեղծումը:

24. Կառավարման, հսկողության եւ անվտանգության համակարգերը պետք է ներառեն երկաթուղային շարժակազմի եւ դրա բաղկացուցիչ մասերի սարքին վիճակի խախտումների մասին նախազգուշացնող ազդանշանային եւ իրազեկվածության ապահովման միջոցներ, որոնք կարող են հանգեցնել անվտանգությանն սպառնացող իրավիճակների առաջացմանը:

25. Երկաթուղային շարժակազմի ինչպես ներկառուցված, այնպես էլ նյութական կրիչների վրա տրամադրվող ծրագրային միջոցները պետք է ապահովեն՝

ա) աշխատունակությունը՝ տեխնիկական միջոցների խափանման եւ (կամ) փչանալու հետեւանքով վերագործարկումից հետո, ինչպես նաեւ

ամբողջականությունը՝ դրանց իսկ խափանման դեպքում.

բ) համակարգչային վիրուսներից, չարտոնված մուտքից, տեղեկատվության պահպանման, ներանցման, մշակման եւ արտածման ժամանակ փչանալու, սխալների եւ խափանումների հետեւանքներից, ինչպես նաեւ տեղեկատվության պատահական փոփոխությունների հնարավորություններից պաշտպանվածություն.

գ) ուղեկցող փաստաթղթերում նկարագրված հատկություններին եւ բնութագրերին համապատասխանությունը:

26. Երկաթուղային շարժակազմը պետք է ունենա ծրագրային ապահովման այն տարբերակը, որի մասին նշվում է ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին ծրագրային ապահովման համապատասխանության հայտարարագրում:

27. Էլեկտրական, հիդրավլիկ եւ (կամ) օդաճնշական մասերի ապարատների անսարքությունների, ծրագրային ապահովման խափանման դեպքում քարշային շարժաբերի եւ այլ սարքավորման աշխատանքի դեպքում երկաթուղային շարժակազմի կառավարման, հսկողության եւ անվտանգության համակարգը չպետք է թույլ տա աշխատանքի բնութագրերի եւ ռեժիմների այնպիսի փոփոխություններ, որոնք կարող են հանգեցնել երկաթուղային շարժակազմի անվտանգ վիճակի խախտմանը: Անվտանգության կողային սարքվածների ճիշտ աշխատանքի ժամանակ կառավարման համակարգի խափանումը չպետք է հանգեցնի երկաթուղային շարժակազմի կանգառմանը եւ դրա նախագծային բնութագրերի խախտմանը:

28. Երկաթուղային շարժակազմի կառավարման համար նախատեսված սարքերն ու սարքվածքները պետք է՝

ա) ունենան գրություններ եւ (կամ) խորհրդանշաններ կոնստրուկտորական փաստաթղթերին համապատասխան.

բ) այնպես նախագծված եւ տեղաբաշխված լինեն, որպեսզի բացառվի դրանց ինքնաբերաբար միացումը, անջատումը կամ փոխարկումը.

գ) տեղաբաշխված լինեն՝ իրականացվող գործառույթների կարեւորությունը, օգտագործման հաջորդականությունն ու հաճախականությունը հաշվի առնելով:

29. Բեռնատար գնացքաքարշերը եւ հատուկ ինքնագնաց երկաթուղային շարժակազմը պետք է սարքավորված լինեն հետեւյալ սարքվածքներով՝

ա) գնացքային ռադիոկապ.

բ) շարժման արագության հսկման սարքեր.

գ) շարժման պարամետրերը գրանցող սարքեր.

դ) ավտոմատ գնացքաքարշային ազդասարք.

ե) օդաճնշական արգելակային մայրուղու խտության հսկման սարքվածքներ:

30. Ինտենսիվ երթեւեկության տեղամասերի վրա շահագործվելու եւ (կամ) միացված գնացքները վարելու համար նախատեսված բեռնատար գնացքաքարշերը պետք է, ի լրումն սույն հոդվածի 29-րդ կետում նշված սարքվածների, սարքավորված լինեն հետեւյալ սարքվածքներով՝

ա) կառավարման ավտոմատացված համակարգ, որն ապահովում է շարժման արագության հսկումը եւ մուտքի ու ելքի լուսացույցների, երկաթուղային գծանցերի ու կայարանների մատուցների մոտ խոսքային տեղեկատվություն ստանալու (փոխանցելու) հնարավորություն.

բ) ավտոմատ հրդեհային ազդասարք:

31. Մեկ մեքենավարի կողմից սպասարկվող բեռնատար գնացքաշարքերը, ի լրումն սույն հոդվածի 29-րդ եւ 30-րդ կետում նշված սարքվածների, պետք է սարքավորված լինեն հետեւյալ սարքվածքներով՝

ա) գնացքի արգելակման ավտոմատ կառավարման համակարգ կամ անվտանգության համալիր գնացքաքարշային սարքվածք.

բ) մեքենավարի զգոնության ստուգման համակարգ.

գ) հետին տեսանելիության հայելիներ կամ նույնանման այլ սարքվածքներ.

դ) արգելակի բլոկավորում.

ե) հրդեհաշիջման համակարգ.

32. Մաներային գնացքաքարշերը պետք է սարքավորված լինել հետևյալ սարքվածքներով՝

ա) վագոնների հեռակառավարվող անջատիչներ.

բ) մաներային գնացքաքարշերի բանեցման տեղամասերի վրա օգտագործվող մաներային ռադիոկապի հետ համատեղելի մաներային ռադիոկապ:

33. Մեկ մեքենավարի կողմից սպասարկվող մաներային գնացքաշարքերը, ի լրումն սույն հոդվածի 32-րդ կետում նշված սարքվածների, պետք է սարքավորված լինեն հետևյալ սարքվածքներով՝

ա) կառավարման երկրորդ վահանակ.

բ) հետին տեսանելիության հայելիներ կամ նույնանման այլ սարքվածքներ.

գ) մեքենավարի կողմից գնացքաքարշը վարելու կարողությունն անսպասելիորեն կորցնելու դեպքում ավտոմատ կանգառումն ապահովող սարքվածքներ:

34. Ուղեորատար գնացքաքարշերը պետք է սարքավորված լինեն հետևյալ սարքվածքներով՝

ա) գնացքային ռադիոկապ.

բ) կառավարման ավտոմատացված համակարգ, որն ապահովում է շարժման արագության հսկումը եւ մուտքի ու ելքի լուսացույցների, երկաթուղային գծանցերի ու կայարանների մատույցների մոտ խոսքային տեղեկատվություն ստանալու (փոխանցելու) հնարավորություն.

- գ) ավտոմատ հրդեհային ազդասարք.
- դ) շարժման պարամետրերը գրանցող սարքեր.
- ե) ավտոմատ գնացքաքարշային ազդասարք.
- զ) էլեկտրաօդանշական արգելակ:

35. Մեկ մեքենավարի կողմից սպասարկվող ուղեորատար գնացքաշարքերը, ի լրումն սույն հոդվածի 34-րդ կետում նշված սարքվածների, պետք է սարքավորված լինեն հետեւյալ սարքվածքներով՝

ա) գնացքի արգելակման ավտոմատ կառավարման համակարգ կամ անվտանգության համալիր գնացքաքարշային սարքվածք.

բ) մեքենավարի զգոնության ստուգման համակարգ.

գ) հետին տեսանելիության հայելիներ կամ նույնանման այլ սարքվածքներ.

դ) արգելակի բլոկավորում.

ե) հրդեհաշիջման համակարգ:

36. Շարժիչավագոնային երկաթուղային շարժակազմը պետք է սարքավորված լինի հետեւյալ սարքվածքներով՝

ա) գնացքային ռադիոկապ.

բ) կառավարման ավտոմատացված համակարգ, որն ապահովում է շարժման արագության հսկումը եւ մուտքի ու ելքի լուսացույցների, երկաթուղային գծանցերի ու կայարանների մատույցների մոտ խոսքային տեղեկատվություն ստանալու (փոխանցելու) հնարավորություն.

- գ) շարժման պարամետրերը գրանցող սարքեր.
- դ) ավտոմատ գնացքաքարշային ազդասարք.
- ե) էլեկտրաօդանշական արգելակ.
- զ) «ուղեւոր-մեքենավար» կապ.
- է) դռների փակման նկատմամբ հսկողությունն ապահովող ազդասարք.
- ը) ավտոմատ հրդեհային ազդասարք:

37. Ուղեւորների, հատուկ եւ վտանգավոր բեռների փոխադրման համար օգտագործվող գնացքաշարքերը եւ շարժիչավագոնային երկաթուղային շարժակազմի գլխամասային վագոնները պետք է սարքավորված լինեն երթեւեկության անվտանգության ապահովմանը նպաստող արբանյակային նավիգացիոն ապարատությամբ:

Արբանյակային նավիգացիոն ապարատությամբ սարքավորվելու ենթակա երկաթուղային շարժակազմի մյուս տիպերը որոշվում են գործադիր իշխանության մարմինների կողմից, որոնք ՄՄ անդամ պետությունների կառավարությունների սահմանած լիազորություններին համապատասխան իրականացնում են երկաթուղային տրանսպորտի ոլորտում պետական քաղաքականության մշակման եւ նորմատիվ-իրավական կարգավորման գործառույթներ:

38. Գնացքաքարշերի, շարժիչավագոնային շարժակազմի եւ հատուկ ինքնագնաց երկաթուղային շարժակազմի ավտոմատ գնացքաքարշային ազդասարքը պետք է համալրվի անվտանգության սարքվածքներով, որոնք կապահովեն շարժման սահմանված արագությունների նկատմամբ հսկողությունը, գնացքի կայանատեղիից դրա ինքաբերաբար հեռանալը կանխող մեքենավարի աշարջության պարբերաբար ստուգումը: Եթե մեքենավարը կորցնում է գնացքաքարշը, շարժիչավագոնային շարժակազմը եւ հատուկ ինքնագնաց երկաթուղային շարժակազմը կառավարելու կարողությունը, իսկ դրեզինայի վարորդը՝ դրեզինան կառավարելու կարողությունը, ապա նշված սարքվածքները

պետք է ապահովեն գնացքի ավտոմատ կանգառումը:

39. Գնացքաքարշի, շարժիչավագոնային շարժակազմի եւ հատուկ ինքնագնաց երկաթուղային շարժակազմի մեքենավարի խցիկի կոնստրուկցիան պետք է ապահովի՝

ա) «նստած» եւ «կանգնած» դիրքում գտնվող գնացքաքարշային բրիգադի համար՝ ընթացուղիների, հատակադիր ազդանշանների, հարեան ուղիների, շարժակազմերի եւ հպումային ցանցի անարգել տեսադաշտը.

բ) գնացքաքարշային բրիգադի աշխատողներից մեկի՝ «կանգնած» դիրքում տեսանելիությունը գնացքների շարժակազմին, մաներային աշխատանքներին մասնակցող անձնակազմի աշխատանքային գոտուն մոտենալիս.

գ) տարվա եւ օրվա ցանկացած ժամի, ցանկացած եղանակային պայմանների, շարժման բոլոր արագությունների դեպքում մեքենավարի խցիկից անարգել տեսադաշտը:

40. Գնացքաքարշի, շարժիչավագոնային շարժակազմի եւ հատուկ ինքնագնաց երկաթուղային շարժակազմի մեքենավարի խցիկի հողմապակիները պետք է հուսալիորեն ամրացված լինեն պատուհանների վրա եւ ունենան խցվածքներ:

41. Գնացքաքարշի, շարժիչավագոնային շարժակազմի եւ հատուկ ինքնագնաց երկաթուղային շարժակազմի մեքենավարի խցիկի նախագծումը, գնացքաքարշային բրիգադի աշխատանքային տեղերի, կառավարման սարքերի ու սարքվածքների, տեղեկատվության արտապատկերման համակարգերի դասավորվածքը, մեքենավարի բազկաթոռի կոնստրուկցիան պետք է համապատասխանի էրգոնոմիկայի եւ համակարգատեխնիկայի պահանջներին:

Կառավարման վահանակը եւ մեքենավարի ու նրա օգնականի աշխատատեղը նախագծելու ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել

էրգոնոմիկայի պահանջները, որոնք ապահովում են կառավարման հարմարավետությունը «նստած» եւ «կանգնած» դիրքից:

Կառավարման վահանակի վրա կառավարման սարքերի ու սարքվածքների, չափիչ սարքերի, լուսային ցուցասարքերի կոնստրուկցիան եւ դասավորությունը պետք է ապահովեն ցերեկային եւ գիշերային ժամերին լույսի փայլքի, ուղիղ կամ անդրադարձող լույսի բացակայության ժամանակ նշված սարքերի եւ ցուցասարքերի ցուցմունքների տեսանելիությունը:

Մեքենավարի խցիկում լուսավորության պարամետրերը, չափիչ սարքերի սանդղակների պայծառությունը պետք է լինեն թույլատրելի արժեքների սահմաններում:

42. Գնացքաքարշերը, շարժիչավագոնային շարժակազմը, ուղեորատար վագոնները, իզոթերմիկ վագոնները ծառայողական եւ օժանդակ շինություններով եւ հատուկ երկաթուղային շարժակազմը պետք է սարքավորված լինեն ընդհանուր, տեղական եւ վթարային լուսավորության համակարգերով:

Սնուցման հիմնական աղբյուրում լարման բացակայության ժամանակ վթարային լուսավորության համակարգը պետք է ավտոմատ հոսանքափոխվի սնուցման ավտոնոմ աղբյուրի (կուտակչային մարտկոցի): Միեւնույն ժամանակ անհրաժեշտ է նախատեսել վթարային լուսավորության ձեռքով միացման հնարավորություն:

43. Գնացքաքարշի, շարժիչավագոնային շարժակազմի եւ հատուկ ինքնագնաց երկաթուղային շարժակազմի մեքենավարի խցիկը վթարային իրավիճակներում լքելը պետք է նախատեսվի կողային պատուհանների միջոցով օժանդակ հարմարանքների օգտագործմամբ:

Շարժիչավագոնային շարժակազմը, ուղեորատար վագոնները, իզոթերմիկ վագոնները ծառայողական ու օժանդակ շինություններով եւ հատուկ երկաթուղային շարժակազմը վագոնի յուրաքանչյուր կողմում պետք է սարքավորված լինեն վթարային ելքերով եւ, հարկ եղած դեպքում, ունենան

սպասարկող անձնակազմի եւ (կամ) ուղեւորների վթարային տարահանման միջոցներ:

Մեկ մարդու ուժը պետք է բավարար լինի վթարային ելքերի բացման համար:

44. Երկաթուղային շարժակազմի՝ սպասարկող անձնակազմի եւ (կամ) ուղեւորների համար նախատեսված ներքին շինությունների ապակեպատումը պետք է երկաթուղային շարժակազմի՝ դրա կանգառի կամ ընթացուղիների ժամանակ առաջացող հարվածային ազդեցությունների ժամանակ ապահովի սպասարկող անձնակազմի եւ (կամ) ուղեւորների անվտանգությունը:

45. Երկաթուղային շարժակազմի՝ տեսազննում, սարքաբերում եւ տեխնիկական սպասարկում պահանջող ներքին մասերը եւ, հարկ եղած դեպքում, արտաքին աշխատանքային սարքավորումը պետք է ունենան լրացուցիչ լուսավորություն:

46. Երկաթուղային շարժակազմը պետք է սարքավորված լինի ավտոմատ արգելակներով, որոնք արգելակման ժամանակ ապահովում են շարժակազմի դանդաղումը կամ հաշվարկված արգելակման ճանապարհի սահմաններում կանգառումը:

Երկաթուղային շարժակազմի ավտոմատ արգելակները պետք է շահագործման տարբեր պայմաններում ունենան անհրաժեշտ ֆունկցիոնալություն եւ հուսալիություն, ապահովեն արգելակման սահունությունը, ինչպես նաեւ արգելակային մայրուղու ամբողջականության խախտման կամ երկաթուղային շարժակազմի միավորների չարտոնված անջատման ժամանակ գնացքի կանգառումը:

47. Ավտոմատ արգելակները պետք է ապահովեն արգելակման տարբեր ռեժիմների կիրառման հնարավորություն՝ պայմանավորված երկաթուղային շարժակազմի բեռնվածքից, շարժակազմի երկարությունից եւ երկաթուղային ուղու պրոֆիլից:

48. Ուղեորատար վագոններում եւ շարժիչավագոնային շարժակազմում կանգառ-ծորակները պետք է տեղադրվեն սրահակներում, ուղեորատար վագոնների ներսում եւ պետք է կապարակնքվեն:

Ծառայողական եւ օժանդակ շինություններով իզոթերմիկ վագոններում կանգառ-ծորակները պետք է տեղադրվեն ծառայողական շինություններում եւ կապարակնքվեն:

Հատուկ ինքնագնաց երկաթուղային շարժակազմում կանգառ-ծորակները տեղադրվում են այն դեպքում, երբ կա դրանց անհրաժեշտությունը:

49. Երկաթուղային շարժակազմը պետք է սարքավորված լինի կայանման արգելակներով: Ստանդարտներին համապատասխան թողարկվող բեռնատար վագոնների ընդհանուր թվից մի մասը պետք է սարքավորված լինեն կանգառ-ծորակ եւ կայանման արգելակ ունեցող անցումային հարթակներով:

Երկաթուղային շարժակազմի կայանման արգելակները պետք է ապահովեն հաշվարկային արգելակային սեղմում եւ երկաթուղային շարժակազմի միավորների պահում՝ թույլատրելի արժեքների սահմաններում:

Ձեռքի կայանման արգելակի ղեկանիվը պետք է սարքավորված լինի ղեկանիվի ինքնաբերաբար պտտվելը բացառող սարքվածքով:

Թույլատրվում է կիրառել ավտոմատ կայանման արգելակներ:

50. Երկաթուղային շարժակազմի բաղկացուցիչ մասերը, որոնց բաժանումը կամ կոտրվելը կարող է հանգեցնել երկաթուղային ուղու վրա դրանց ընկնելուն կամ երկաթուղային շարժակազմի եզրաչափից դուրս գալուն, պետք է ունենան թույլատրելի արժեքների դեպքում դրանց կողմից պաշտպանվող սարքավորումների քաշին դիմացող ապահովիչ սարքվածքներ:

51. Երկաթուղային շարժակազմի գլխավոր օդային ռեզերվուարները եւ կուտակչային մարտկոցները պետք է տեղակայված լինեն մեքենավարի խցիկից, ուղեորասրահներից եւ սպասարկող անձնակազմի համար նախատեսված

շինություններից դուրս:

52. Գնաքցաքարշերի եւ շարժիչավագոնային երկաթուղային շարժակազմի էլեկտրադինամիկական արգելակի (առկայության դեպքում) գործողությունը ծառայողական եւ արտակարգ արգելակում կատարելու դեպքում պետք է համաձայնեցված լինի օդաճնշական եւ էլեկտրաօդաճնշական արգելակների աշխատանքի հետ: Էլեկտրադինամիկական արգելակի փչանալու դեպքում պետք է ապահովվի դրա ավտոմատ փոխարինումը օդաճնշական արգելակով:

53. Արագընթաց ուղեւորատար վագոնների համար պետք է նախատեսված լինեն արգելակման արդյունավետության եւ երթեւեկության անվտանգության բարձրացման լրացուցիչ միջոցներ (օրինակ, սկավառակային, մագնիսառելսային արգելակների կիրառում):

54. Երկաթուղային շարժակազմը եւ դրա բաղկացուցիչ մասերը պետք է կայուն աշխատեն թույլատրելի արժեքների սահմաններում շրջակա օդի ջերմաստիճանի պայմաններում եւ պահպանեն աշխատունակությունը թույլատրելի արժեքների սահմաններում ջերմաստիճանի կարճաժամկետ բարձրացման դեպքում:

55. Երկաթուղային շարժակազմը պետք է սարքավորված լինի կցորդման սարքվածքով, որը կբացառի արագընթաց երկաթուղային շարժակազմի միավորների ինքնաբերաբար բաժանվելը եւ արտակարգ դեպքերում կապահովի դրա տարհանումը:

Երկաթուղային շարժակազմի ինքնակցիչ սարքվածքի կազմում պետք է ներառվի էներգակլանող ապարատ:

56. Ինքնակցիչ սարքվածքով սարքավորված ուղեւորատար վագոնները եւ շարժիչավագոնային շարժակազմը պետք է սարքավորված լինեն թափարգելային սարքվածքներով:

57. Երկաթուղային շարժակազմի անիվները, սոնիներն ու անվազույգերի

կալանդները, բեռնատար վագոնների սայլակների կողային շրջանակներն ու զսպանակավորված հեծանները պետք է ունենան ստատիկական ամրության պաշար եւ հոգնածության դիմադրության անհրաժեշտ գործակից, որոնք կոնստրուկտորական փաստաթղթերում նշված դրանց ամբողջական զննման ժամկետում կամ ծառայության ժամկետում ապահովում են դեֆեկտների (ճեղքվածքների) առաջացման եւ ընդարձակման նկատմամբ կայունությունը:

Բեռնատար վագոնների սայլակների անիվների, սոնիների, կալանդների, կողային շրջանակների ու զսպանակավորված հեծանների մեխանիկական հատկությունները, հարվածային մածուցիկությունը եւ մնացորդային լարման վիճակը ծառայության նախատեսված ժամկետում պետք է ապահովեն դրանց մեխանիկական անվտանգությունը:

58. Երկաթուղային շարժակազմի եւ դրա բաղկացուցիչ մասերի նախագծման եւ արտադրության ժամանակ կիրառվող նյութերը պետք է անվտանգ լինեն մարդկանց եւ շրջակա միջավայրի համար:

59. Գնացքաքարշերի, շարժիչավագոնային շարժակազմի ու հատուկ ինքնագնաց երկաթուղային շարժակազմի մեքենավարի խցիկի, ուղեորատար վագոնների ու շարժիչավագոնային շարժակազմի ներքին շինությունների, հատուկ երկաթուղային շարժակազմի ծառայողական եւ կենցաղային շինությունների, ինչպես նաեւ ծառայողական եւ օժանդակ շինություններով իզոթերմիկ վագոնների կենսաապահովման համակարգերի (օդի լավորակման համակարգ՝ ջեռուցում, օդափոխություն, հովացում, լուսավորման, թրթռածայնային պաշտպանության, օդամաքրման, ենթածայնից, անդրածայնից եւ էլեկտրամագնիսական ճառագայթումից պաշտպանության համակարգեր) բնութագրերը (միկրոկլիմայի ցուցանիշները, աղմուկի, թրթռման, անդրածայնի, էլեկտրամագնիսական ճառագայթման, լուսավորման, օդային միջավայրի բաղադրության մակարդակները) աշխատանքային տեղերի համար չպետք է գերազանցեն թույլատրելի արժեքները:

Երկաթուղային շարժակազմի առաջացրած արտաքին աղմուկը չպետք է գերազանցի թույլատրելի արժեքները:

60. Հեղուկների (թթուներ, ալկալիներ, հեղուկացված գազեր) եւ վառելիքաքսուքային նյութերի կիրառությունը երկաթուղային շարժակազմի եւ դրա բաղկացուցիչ մասերի արտադրության, շահագործման, տեխնիկական սպասարկման եւ վերանորոգման ընթացքում չպետք է հանգեցնի մարդու, կենդանիների ու բույսերի կյանքի ու առողջության համար վտանգավոր ներգործությունների առաջացմանը:

61. Երկաթուղային շարժակազմի ոտնատեղերը եւ բռնածողերը պետք է հուսալիորեն ամրացված լինեն: Աստիճանների, հարթակների, ոտնատեղերի եւ վրաքաշների մակերեսային պետք է խոչընդոտի սայթաքումը:

Վագոնների, հատուկ երկաթուղային շարժակազմի տանիք տանող սանդուղքների մոտ պետք է զետեղված լինեն վտանգի մասին նախազգուշացնող նշաններ:

Գնացքաքարշերի եւ էլեկտրագնացքների շարժիչավոր վագոնների տանիք բարձրանալու համար նախատեսված սանդուղքները պետք է փակ վիճակում բլոկավորվեն եւ բացվեն հատուկ սարքվածքի օգնությամբ:

62. Երկաթուղային շարժակազմի կոնստրուկցիան պետք է ունենա ամբարձիկների միջոցով այն բարձրացնելու համար նախատեսված տեղեր: Ամբարձիկների գլխիկների հետ շփման համար նախատեսված մակերեսային պետք է խոչընդոտի դրանց սայթաքումը:

Ռեւերից անվազույզերի արտանկման դեպքերի համար պետք է նախատեսված լինի երկաթուղային շարժակազմի յուրաքանչյուր միավորը ամբարձիչների եւ ամբարձիկների միջոցով բարձրացնելու, ինչպես նաեւ անվազույզի լուվելու դեպքում այն փոխադրելու հնարավորություն:

63. Երկաթուղային շարժակազմի եւ դրա բաղկացուցիչ մասերի

կոնստրուկցիայի եւ սարքավորումների դուրս ցցված դետալները չպետք է ունենան սուր կողեր, եզրեր եւ անկյուններ, որոնք կարող են վնասվածք պատճառել սպասարկող անձնակազմին եւ (կամ) ուղեւորներին:

64. Ուղեւորատար վագոնների սրահների, շարժիչավագոնային շարժակազմի վագոնների, գնացքաքարշերի, շարժիչավագոնային շարժակազմի, հատուկ երկաթուղային շարժակազմի մեքենավարի խցիկի, իզոթերմիկ վագոնների ծառայողական եւ օժանդակ շինությունների ներքին մակերեսային հարդարման համար կիրառվող նյութերը չպետք է գերազանցեն հրդեհի առաջացման եւ ծավալման, ինչպես նաեւ մարդկանց վրա հրդեհի վտանգավոր գործոնների ազդեցության ռիսկի աստիճանի թույլատրելի արժեքները:

Ուղեւորատար վագոնները ուղեկցորդների վագոնախցիկի առկայության դեպքում ուղեւորասրահի եւ ուղեկցորդների վագոնախցիկի, իսկ խցիկավոր վագոններում նաեւ խցիկների միջեւ պետք է սարքավորված լինեն հրակասեցնող միջնապատերով: Ոչ խցիկավոր տիպի վագոններում առաստաղից եւ խցիկավոր տիպի վագոնի մեծ (հիմնական) միջանցքից վեր գտնվող տարածությունը հրակասեցնող վերնափեղկերի տեղակայման եղանակով պետք է բաժանված լինի առնվազն 3 գոտու:

Վագոնատիպ թափք ունեցող գնացքաքարշերի, շարժիչավագոնային շարժակազմի մեքենավարի խցիկը պետք է վագոնատիպ թափք ունեցող գնացքաքարշի կամ շարժիչավագոնային շարժակազմի մնացած մասից անջատված լինի հրակասեցնող միջնապատով:

65. Ուղեւորատար վագոններում եւ շարժիչավագոնային շարժակազմում պետք է ապահովվի անցումային հարթակներով վագոնից վագոն՝ սպասարկող անձնակազմի եւ ուղեւորների անվտանգ անցնելը: Անցումային հարթակների կոնստրուկցիան պետք է լինի փակ տիպի, այսինքն՝ այն պետք է բացառի սպասարկող անձնակազմի եւ ուղեւորների պատահական շփումը երկաթուղային շարժակազմի արտաքին տարրերի, երկաթուղային տրանսպորտի

ենթակառուցվածքի այնպիսի տարրերի հետ, ինչպիսիք են հպումային ցանցը, ուղու վերին կառույցը եւ այլն, ինչպես նաեւ նվազագույնի հասցնի շրջակա միջավայրի հնարավոր անբարենպաստ գործոնների ազդեցությունը սպասարկող անձնակազմի եւ ուղեւորների վրա՝ անցումային հարթակներում նրանց գտնվելու ժամանակ:

66. Ուղեւորատար վագոնների, ծառայողական եւ օժանդակ շինություններով իզոթերմիկ վագոնների վերին մահճակատեղերի կոնստրուկցիան եւ ամրակումը պետք է բացառեն դրանց ընկնելու կամ թեքվելու հնարավորությունը, որը հանգեցնում է սպասարկող անձնակազմի եւ (կամ) ուղեւորների վնասվածք ստանալուն:

Վերին մահճակատեղերը պետք է սարքավորված լինեն արգելափակիչ գոտիներով կամ կողեզրերով, որոնք կբացառեն սպասարկող անձնակազմի եւ ուղեւորների ընկնելը:

67. Ուղեւորատար վագոնների եւ շարժիչավագոնային շարժակազմի բազկաթոռները եւ բազմոցները պետք է ամուր ամրացված լինեն հատակին եւ կոնստրուկցիային, որը կբացառի դրանց շրջվելու հավանականությունը, այդ թվում՝ արտակարգ արգելակման ժամանակ:

Ուղեւորների եւ սպասարկող անձնակազմի անձնական ուղեբեռի տեղակայման եւ ամրացման տեղերը պետք է այնպես հաշվարկված լինեն, որ արտակարգ արգելակման եւ (կամ) վթարային տարահանման ժամանակ ուղեւորներին եւ սպասարկող անձնակազմին վնաս չպատճառեն:

Ուղեւորատար վագոնների, շարժիչավագոնային շարժակազմի ու ծառայողական եւ օժանդակ շինություններով իզոթերմիկ վագոնների նախագծումը, ուղեւորների եւ սպասարկող անձնակազմի տեղերի դասավորվածքը պետք է համապատասխանեն էրգոնոմիկայի եւ համակարգատեխնիկայի պահանջներին:

68. Բազմահատվածային գնացքաքարշերը պետք է սարքավորված լինեն

փակ տիպի անցումային հարթակներով՝ գնացքաքարշային բրիգադի մեկ հատվածամասից մյուս հատվածամաս անվտանգ անցնելն ապահովելու համար:

69. Երկաթուղային շարժակազմի դիզելի, էլեկտրական մեքենաների, օդափոխիչների, ճնշակների եւ մյուս սարքավորումների պտտվող մասերը պետք է պաշտպանակված լինեն երկաթուղային շարժակազմի սարքավորումների շարժվող մասերի հետ սպասարկող անձնակազմի եւ ուղեւորների պատահական շփումը բացառող հատուկ սարքվածքներով:

70. Ծածկոցատիպ թափք ունեցող գնացքաքարշերը պետք է ունենան կողային եւ ճակատային հարթակներ: Կողային եւ ճակատային հարթակների արտաքին կողմի վրա պետք է տեղակայված լինեն միջանկյալ պաշտպանակով բռնածողեր-փակոցներ: Հատակների արտաքին պարագծով պետք է տեղակայված լինեն սահմանափակող զոլակներ:

71. Գնացքաքարշերի, շարժիչավագոնային շարժակազմի, ուղեւորատար եւ իզոթերմիկ վագոնների էլեկտրասարքավորումը պետք է ունենա գերբեռնման, կարճ միակցումների, հողակցման, էլեկտրասարքավորման գերլարման, ինչպես նաեւ ռեկուպերատիվ արգելակման, տեղապտտման եւ անվազույգերի սայթաքման ժամանակ հպումային ցանցի լարումը հանելու դեպքում գործի ընկնող պաշտպանություն եւ ազդասարք: Պաշտպանությունը գործելիս պետք է բացառվի էլեկտրասարքավորման վնասվելը եւ չպետք է հանգեցնի վտանգավոր հետեւանքների, ինչպիսիք են՝ ծխոտվածությանը կամ բռնկմանը հանգեցնող անթույլատրելի տաքացումը եւ (կամ) էլեկտրասարքավորման մեկուսիչի ծակմանը հանգեցնող գերլարումները:

72. Երկաթուղային շարժակազմի էլեկտրասարքավորման՝ լարման տակ գտնվող չպաշտպանված (չմեկուսացված) մասերը պետք է ունենան սպասարկող անձնակազմի եւ (կամ) ուղեւորների համար դրանց պատահաբար հասանելի դառնալը բացառող պաշտպանություն:

Էլեկտրասարքավորման մետաղական պատյանները, ինչպես նաեւ բոլոր

պաշտպանակները (ներառյալ խողովակները), հոսանքատար մասերի ամրակման համար նախատեսված կոնստրուկցիաները, որոնք անսարքության դեպքում կարող են հայտնվել թույլատրելի արժեքները գերազանցող լարման տակ, պետք է հողակցվեն երկաթուղային շարժակազմի հենամարմնի վրա:

73. Գնացքաքարշերը, շարժիչավագոնային շարժակազմը, ուղեորատար վագոնները, հատուկ երկաթուղային շարժակազմը եւ ավտոմատ էներգետիկական կայանք ունեցող իզոթերմիկ վագոնները պետք է սարքավորված լինեն էլեկտրապաշտպանության միջոցների լրակազմի պահպանման համար նախատեսված հատուկ տեղերով, ինչպես նաեւ երկաթուղային շարժակազմի հավելվածի սույն կետում նշված տեխնիկական սպասարկման եւ անվտանգ շահագործման համար անհրաժեշտ այլ հատուկ սարքավորումներով:

74. Երկաթուղային շարժակազմից եւ դրա բաղկացուցիչ մասերից առաջացող էլեկտրամագնիսական խանգարումների մակարդակը չպետք է գերազանցի այն արժեքները, որոնց սահմաններում այդ խանգարումները չեն ազդում երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի օբյեկտների եւ դրա վրա շահագործվող երկաթուղային շարժակազմի աշխատունակության վրա:

75. Կուտակչի տուփը պետք է լինի պայթյունասանվտանգ:

76. Գնացքաքարշերը, շարժիչավագոնային շարժակազմը, հատուկ երկաթուղային շարժակազմը, ուղեորատար եւ իզոթերմիկ վագոնները պետք է սարքավորված լինի հրդեհի ազդանշանման համակարգերով, հրդեհաշիջման կայանքներով, կրակմարիչների տեղակայման համար նախատեսված հատուկ տեղերով եւ հակահրդեհային գույքով:

Հրդեհի ազդանշանման համակարգերը պետք է տրամադրեն ձայնային եւ (կամ) օպտիկական տեղեկատվություն՝ նշելով բռնկման առաջացման վայրը, ավտոմատ կերպով որոշեն ընդունիչ-ստուգիչ սարքեր ունեցող ազդասարքերի կապի գծերի անսարքությունները (կարճ միակցում, խզվածքներ), ինչպես նաեւ

պետք է ապահովվի դրանց սարքինությունը պարբերաբար ստուգելու հնարավորություն:

77. Գնացքարշերը եւ ավտոմատ էներգետիկական կայանք ունեցող իզոթերմիկ վագոնները, դիզելային գնացքները, դիզելային էլեկտրագնացքները, ռելսային ավտոբուսները, հատուկ ինքնագնաց երկաթուղային շարժակազմը պետք է սարքավորված լինեն կայծամարիչներով:

78. Վագոնատիպ թափք ունեցող գնացքաքարշերը պետք է ունենան լուսային եւ ձայնային ազդասարքեր՝ մեքենավարի օգնականին մեքենայական (դիզելի համար նախատեսված) շինությունից մեքենավարի խցիկ կանչելու համար:

79. Ավտոմատ էներգետիկական կայանք ունեցող գնացքաքարշերի, դիզելային գնացքների, ռելսային ավտոբուսների, դիզելային էլեկտրագնացքների, ավտոմատ էներգետիկական կայանք ունեցող իզոթերմիկ վագոնների եւ հատուկ ինքնագնաց շարժակազմի օդափոխության համակարգը պետք է բացառի մեքենավարի խցիկ, սպասարկող անձնակազմի համար նախատեսված շինություն, ինչպես նաեւ ուղեորասրահներ բանեցված գազի եւ փոշու ընկնելը:

Ավտոմատ էներգետիկական կայանք ունեցող գնացքաքարշերի, դիզելային գնացքների, ռելսային ավտոբուսների, դիզելային էլեկտրագնացքների, ավտոմատ էներգետիկական կայանք ունեցող իզոթերմիկ վագոնների եւ հատուկ ինքնագնաց երկաթուղային շարժակազմի մեքենայական շինությունում օդային միջավայրի վիճակի բնութագրերը չպետք է գերազանցեն թույլատրելի արժեքները:

80. Վագոնատիպ թափք ունեցող դիզելային ջերմաքարշերի եւ ավտոմատ էներգետիկական կայանք ունեցող իզոթերմիկ վագոնների հովացման համակարգերի կոնստրուկցիան պետք է ապահովի հովացման համակարգի լրացավորման հնարավորությունը՝ առանց սպասարկող անձնակազմի ջերմաքարշի կամ իզոթերմիկ վագոնի տանիքի վրա գտնվելու

անհրաժեշտության:

81. Ուղեորատար վագոնները պետք է սարքավորված լինեն հետեւյալ սարքվածքներով՝

ա) օդի լավորակման (ջեռուցման, հովացման, օդափոխության) համակարգ, ծխելու համար նախատեսված վայրերը պետք է սարքավորված լինեն օդը, առանց այն վերաշրջանառելու, շինությունից դուրս հանող օդափոխության առանձին համակարգով.

բ) խմելու եւ տնտեսական ջրամատակարարման համակարգ.

գ) էկոլոգիապես մաքուր զուգարանային համալիրներ:

դ) գնացքների ներքին հեռախոսային կապ.

ե) առանցքակալատուփերի տաքացման նկատմամբ հսկողության համակարգ.

զ) գնացքում ռադիոհաղորդում.

է) ծխաարտանետիչ խողովակների կայծմարիչներ ջեռուցման ավտոնոմ համակարգերի կիրառման դեպքում:

82. Արագընթաց ուղեորատար վագոնները, ի լրումն սույն հոդվածի 81-րդ կետում նշված սարքվածների, պետք է սարքավորված լինեն կենտրոնացված էլեկտրամատակարարման համակարգով:

83. Արագընթաց շարժիչավագոնային շարժակազմը պետք է սարքավորված լինի հետեւյալ սարքվածքներով՝

ա) օդի լավորակման (ջեռուցման, հովացման, օդափոխության) համակարգ.

բ) գնացքների ներքին հեռախոսային կապ.

գ) առանցքակալատուփերի տաքացման նկատմամբ հսկողության համակարգ.

դ) խմելու եւ տնտեսական ջրամատակարարման համակարգ.

ե) էկոլոգիապես մաքուր զուգարանային համալիրներ:

84. Շարժիչավագոնային երկաթուղային շարժակազմի գլխամասային վագոնները պետք է սարքավորված լինեն էկոլոգիապես մաքուր զուգարանային համալիրներով:

85. Ծառայողական եւ օժանդակ շինություններով իզոթերմիկ վագոնները պետք է սարքավորված լինեն հետեւյալ սարքվածներով՝

ա) օդի լավորակման (ջեռուցման, հովացման, օդափոխության) համակարգ.

բ) խմելու եւ տնտեսական ջրամատակարարման համակարգ.

գ) էկոլոգիապես մաքուր զուգարանային համալիրներ:

դ) առանցքակալատուփերի տաքացման նկատմամբ հսկողության համակարգ.

86. Պարենային հումք եւ սննդամթերք փոխադրելու համար նախատեսված վագոնները պետք է թույլատրելի արժեքների սահմաններում ցանկացած տեսակի պարենային հումքի եւ սննդամթերքի համար ապահովեն ջերմաստիճան, խոնավություն, օդափոխանակության ցուցանիշներ:

87. Առանց ուղեկցորդի սպասարկվող ուղեւորատար վագոնները եւ շարժիչավագոնային շարժակազմի վագոնները պետք է սարքավորված լինեն գնացքաքարշային կամ գնացքի բրիգադի հետ ուղեւորների կապն ապահովող, անմիջապես ուղեւորասրահում տեղակայված սարքվածքներով:

88. Ուղեւորատար վագոնների եւ շարժիչավագոնային շարժակազմի վագոնների մուտքի դռները պետք է սարքավորվեն բացելու (փակելու) համար նախատեսված համակարգերով (սարքվածքներով) եւ սպասարկող անձնակազմի եւ (կամ) ուղեւորների անվտանգությունն ապահովող հսկողության համակարգով:

Ուղեորատար վագոնների մուտքի դռները պետք է սարքավորված լինեն ուղեորների կամ կողմնակի անձանց կողմից շարժակազմի շարժման ընթացքում դրանց բացելը բացառող փակիչ սարքվածքներով:

89. Ուղեորատար վագոնների եւ շարժիչավագոնային շարժակազմի վագոնների մուտքի դռների վթարային բացումը պետք է իրականացվի ըստ հաստիքային սխեմայի եւ դրանք բաց վիճակում ֆիքսելու եղանակով: Գնացքի՝ թույլատրելի արժեքների սահմաններում շարժման արագության դեպքում մուտքի՝ հենովի դռների վթարային բացումն իրականացվում է ձեռքի ռեժիմով:

90. Շարժիչավագոնային շարժակազմի վագոնները պետք է սարքավորված լինեն հաշմանդամների եւ երեխաների հետ երթուկող ուղեորների անցնելու համար նախատեսված տեղերով:

91. Սահմանափակ շարժունակությամբ քաղաքացիների անցնելու համար նախատեսված ուղեորատար վագոնները եւ շարժիչավագոնային շարժակազմի վագոնները պետք է սարքավորված լինեն հետեւյալ սարքվածքներով՝

ա) հաշմանդամների սայլակների արագ բարձրացման, իջեցման եւ հուսալի ամրակման համար նախատեսված սարքվածքներ.

բ) ավելացված մակերեսով հատուկ սանհանգույցներ.

գ) ավելացված լայնքով անցումներ:

92. Երկաթուղային շարժակազմը պետք է սարքավորված լինի տեսողական եւ ձայնային ազդանշանման սարքվածքներով:

93. Վագոնատիպ թափք ունեցող գնացքաքարշերի, շարժիչավագոնային շարժակազմի գլխամասային վագոնների եւ հատուկ ինքնագնաց երկաթուղային շարժակազմի ճակատային մասերը, ինչպես նաեւ ծածկոցատիպ թափք ունեցող գնացքաքարշերի ճակատային մասերը պետք է սարքավորված լինեն լուսարձակով եւ աջ ու ձախ կողմից երկու ազդանշանային բուֆերային լապտերներով:

Ազդանշանային լապտերները պետք է տեղակայված լինեն նաև գնացքաքարշի յուրաքանչյուր հատվածամասի հետեւի ճակատային պատի վրա, որը կարող է օգտագործվել որպես ինքնուրույն միավոր:

Լուսարձակը պետք է տեղակայված լինի գնացքաքարշի, շարժիչավագոնային շարժակազմի եւ հատուկ ինքնագնաց երկաթուղային շարժակազմի գլխամասային վագոնի սիմետրիայի երկայնական առանցքի երկայնքով: Լուսարձակի առանցքային ճառագայթը պետք է ուղղված լինի երկաթուղային ուղու հորիզոնական հարթությանը զուգահեռ: Լուսարձակի միացման սխեմայով պետք է նախատեսվի լույսի առանցքային նոմինալ ուժ ապահովող պայծառ եւ աղոտ լույս միացնելու հնարավորություն:

Պետք է ապահովվի մեքենավարի խցիկից լուսարձակի լամպը փոխելու եւ լուսային ճառագայթի ուղղությունը կարգավորելու հնարավորությունը:

Ուղեորատար վագոնները պետք է սարքավորված լինեն վագոնների երկու ճակատային պատերի վրա տեղակայված երեք ազդանշանային լապտերներով:

94. Բեռնատար վագոնները պաշտպանակման նշանների տեղակայման համար պետք է սարքավորված լինեն բարձակներով:

95. Գնացքաքարշերը, շարժիչավագոնային շարժակազմը եւ հատուկ ինքնագնաց երկաթուղային շարժակազմը պետք է սարքավորված լինեն բարձր ձայն ապահովող (տիֆոններ) եւ ցածր ձայն ապահովող (սուլիչներ) ձայնային ազդանշանման սարքվածքներով: Տիֆոնը եւ սուլիչը միացնելու սարքվածքը պետք է տեղակայված լինեն մեքենավարի եւ մեքենավարի օգնականի օպտիմալ հասանելիության գոտում: Գնացքաքարշերի եւ շարժիչավագոնային շարժակազմի ձայնային ազդանշանների կառավարման համակարգը պետք է ունենա կրկնակի՝ ներառի մեխանիկական ներգործության եղանակով տիֆոնի օդի կափույրի անմիջական կառավարման համար նախատեսված սարքվածքներ:

96. Վագոնատիպ թափք ունեցող ջերմաքարշերի, դիզելային գնացքների, ավտոմատրիսների, ռելսային ավտոբուսների, դիզելային էլեկտրագնացքների,

ավտոմատ էներգետիկական կայանք ունեցող իզոթերմիկ վազոնների, հատուկ ինքնագնաց երկաթուղային շարժակազմի մեքենայական (դիզելի համար նախատեսված) շինությունը պետք է մեքենավարի խցիկից կամ սպասարկող անձնակազմի համար նախատեսված շինությունից անջատված լինի նախամուտքով: Պետք է ապահովվի նախամուտքից մեքենավարի խցիկ կամ սպասարկող անձնակազմի համար նախատեսված շինություն ազատ անցնելը:

97. Բեռնատար, իզոթերմիկ, փոստային առաքումների փոխադրման համար նախատեսված եւ ուղեբեռի փակ վազոնների կողային դռները պետք է սարքավորված լինեն դռների լրիվ բացվելու դեպքում դրանց տեղափոխումը սահմանակող սարքվածքներով: Դռները, ելանցքների կափարիչները եւ դրանց փականները պետք է բացվեն մեկ մարդու ուժով: Ծածկված, կողային դռներ ունեցող բեռնատար վազոնները պետք է սարքավորված լինեն չհանվող սարքավորումներով՝ տախտամածները, լուսամուտի շրջանակները, դռան փակոցները, հրացանի ատամնանիվները եւ վառարանի լրակազմը տեղակայելու համար:

Ծածկված, սորուն բեռների բեռնման համար տանիքին ելանցք ունեցող բեռնատար վազոնները պետք է սարքավորված լինեն վազոնի տանիքի վրա դրվող վերնահարթակներով եւ այդ վերնահարթակների վրա բարձրանալու համար անհրաժեշտ սանդուղքներով:

98. Վազոն-ցիստեռները կաթսայի դրսի երկու կողմից պետք է սարքավորված լինեն ակոսավոր աստիճաններ եւ բռնաձողեր ունեցող սանդուղքներով: Ելնելով կաթսայի եւ շրջանակի նշանակությունից՝ ցիստեռները պետք է սարքավորված լինեն համապատասխան կոնստրուկցիայի հողակցման համակարգերով:

Վազոն-ցիստեռնի կաթսան պետք է սարքավորված լինի ներքեի կամ վերեի ջրթափ սարքվածքով, լցնովի եւ դատարկովի ամրանով, ներթողի եւ արտաթողի ապահովիչ կափույրներով, այլ անհրաժեշտ ամրաններով, ինչպես

նաեւ ներքին սանդուղքով, իսկ հեղուկ գազի կաթսաները՝ նաեւ ապահովիչ թաղանթով եւ ապահովի կաթսաների հերմետիկությունը:

Հատուկ տիպի վազոն-ցիստեռնների կաթսաները պետք է սարքավորված լինեն փակիչ եւ փակիչ-կարգավորիչ ամրանով, ինչպես նաեւ ունենան հսկողության սարքեր տեղակայելու հնարավորություն:

Վազոն-ցիստեռնների կաթսաները պետք է սարքավորված լինեն վազոնի արտանկման ժամանակ լցնովի եւ դատարկովի ամրանի կոտրվածքը եւ կաթսայից փոխադրվող հեղուկի եւ գազի արտահոսումը կանխող ապահովիչ սարքվածքներով:

99. Երկաթուղային շարժակազմը եւ դրա բաղկացուցիչ մասերը, դրանց արտադրության ժամանակ կիրառվող նյութերը պետք է հաշվարկված լինեն այնպես, որպեսզի հնարավոր լինի դրանք անվտանգ վերամշակել կամ ուտիլիզացնել ծառայության նախատեսված ժամկետը լրանալուց հետո:

Հոդված 5. Անվտանգության պահանջներին համապատասխանության ապահովումը

1. Կամավոր հիմունքով կիրառվող ստանդարտներով նախատեսված արտադրանքի անվտանգության թույլատրելի արժեքների (այսուհետ՝ թույլատրելի արժեքներ) ապահովումը բավարար պայման է ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջների կատարման համար:

2. ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգի հետ փոխկապակցված ստանդարտների ցանկերը հաստատում է Մաքսային միության հանձնաժողովը (այսուհետ՝ ՄՄՀ):

3. Ստանդարտներում՝ անվտանգության պահանջներին վերաբերող փոփոխություններ կատարելիս փոփոխություն առաջարկող կողմը պետք է ներկայացնի ռիսկերի հաշվարկ՝ ներկայացնելով ապացույցներ առ այն, որ

կատարված փոփոխություններն անվտանգ են:

Հոդված 6. Համապատասխանության գնահատումը

1. Արտադրանքի համապատասխանության գնահատումն իրականացվում է համապատասխանության պարտադիր հավաստման ձևով:

2. Արտադրանքի համապատասխանության պարտադիր հավաստումն իրականացվում է հետևյալ ձևերով՝

ա) սերտիֆիկացում.

բ) համապատասխանության մասին հայտարարագրի ընդունում (այսուհետ՝ համապատասխանության հայտարարագրում):

3. Մաքսային միության շրջանակներում ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջներին արտադրանքի համապատասխանության գնահատման (հավաստման) աշխատանքներն իրականացվում են Մաքսային միության սերտիֆիկացման մարմինների ու փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) միասնական ռեեստրում ընդգրկված հավատարմագրված սերտիֆիկացման (համապատասխանության գնահատման (հավաստման)) մարմինների (այսուհետ՝ սերտիֆիկացման մարմիններ) կողմից:

4. Սերտիֆիկացման ժամանակ արտադրանքի պարամետրերի անհրաժեշտ փորձարկումներն ու չափումներն իրականացվում են Մաքսային միության սերտիֆիկացման մարմինների ու փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) միասնական ռեեստրում ընդգրկված փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) (այսուհետ՝ հավատարմագրված փորձարկման լաբորատորիաներ (կենտրոններ)) կողմից:

Հավատարմագրված փորձարկման լաբորատորիան (կենտրոնը) հավատարմագրման իր ոլորտի շրջանակներում սերտիֆիկացման մարմնի հետ

կնքվող պայմանագրի պայմանների հիման վրա իրականացնում է արտադրանքի հետազոտություններ (փորձարկումներ) եւ չափումներ: Հավատարմագրված փորձարկման լաբորատորիաները (կենտրոնները) հետազոտությունների (փորձարկումների) եւ չափումների արդյունքները ձեւակերպում են փորձարկումների համապատասխան արձանագրություններով, եւ դրանք հանձնում են սերտիֆիկացման մարմիններին: Սերտիֆիկացման մարմինը, սույն հոդվածի 21-67-րդ կետերում շարադրված՝ սերտիֆիկացման իրականացման կարգին համապատասխան, ընդունում է համապատասխանության սերտիֆիկատ տրամադրելու կամ դրա տրամադրումը մերժելու մասին որոշում:

Փորձարկումների ժամանակ կիրառվող չափումների միջոցները պետք է համապատասխանեն ՄՄ անդամ պետության՝ չափումների միասնականության ապահովման մասին օրենսդրության պահանջներին:

5. Արտադրանքի համապատասխանության գնահատման ժամանակ ստանդարտների դրույթները կիրառելու դեպքում սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին դրա համապատասխանության գնահատումը կարող է իրականացվել այդ ստանդարտները հաշվի առնելով: Ստանդարտները չկիրառելը չի կարող գնահատվել որպես սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջների չկատարում: Այդ դեպքում սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին արտադրանքի համապատասխանությունը գնահատելու համար թույլատրվում է սույն հոդվածի 18-րդ կետին համապատասխան կիրառել այլ փաստաթղթեր:

6. Սերտիֆիկացման ենթակա երկաթուղային շարժակազմի ցանկը ներկայացված է 2-րդ հավելվածում:

Սերտիֆիկացման ենթակա երկաթուղային շարժակազմի բաղկացուցիչ մասերի ցանկը ներկայացված է 3-րդ հավելվածում:

Սեփական ապացույցների, սերտիֆիկացման մարմնի եւ (կամ) հավատարմագրված փորձարկման լաբորատորիայի (կենտրոնի)

մասնակցությամբ ձեռք բերված ապացույցների հիման վրա համապատասխանության հայտարարագրման ենթակա երկաթուղային շարժակազմի բաղկացուցիչ մասերի ցանկը ներկայացված է 4-րդ հավելվածում:

Սեփական ապացույցների հիման վրա համապատասխանության հայտարարագրման ենթակա երկաթուղային շարժակազմի բաղկացուցիչ մասերի ցանկը ներկայացված է 5-րդ հավելվածում:

Սերտիֆիկացում իրականացնելու կարգը ներկայացված է սույն հոդվածի 21-ից 70-րդ կետերում:

7. Արտադրանքի սերտիֆիկացման սխեմաների ցանկը ներկայացված է 6-րդ հավելվածում:

ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգերի՝ երկաթուղային շարժակազմի սերտիֆիկացման ժամանակ կիրառվող առանձին դրույթների ցանկը ներկայացված է 7-րդ հավելվածում:

ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգերի՝ երկաթուղային շարժակազմի բաղկացուցիչ մասերի համապատասխանության պարտադիր հավաստման ժամանակ կիրառվող առանձին դրույթների ցանկը ներկայացված է 8-րդ հավելվածում:

8. ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգով սահմանված պարտադիր պահանջներին համապատասխանությունն ստուգելու նպատակով պատրաստողը փորձահավանության արժանացած մեթոդակարգերով իրականացնում է ընդունման, հանձնման-ընդունման, պարբերական եւ տիպային փորձարկումներ:

9. Սերտիֆիկացումն իրականացվում է սերտիֆիկացման մարմնի կողմից հայտատուի հետ կնքված պայմանագրի հիման վրա:

Սերտիֆիկացման ժամանակ հայտատու կարող է լինել ՄՄ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան ՄՄ-ի տարածքում գրանցված իրավաբանական անձը (ֆիզիկական անձը՝ որպես անհատ

ձեռնարկատեր), որը պատրաստող կամ վաճառող կամ, մատակարարվող արտադրանքի՝ ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության ապահովման եւ մատակարարվող արտադրանքի՝ ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին անհամապատասխանության համար պատասխանատվության մասով իր հետ կնքված պայմանագրի հիման վրա օտարերկրյա պատրաստողի գործառույթներ իրականացնող անձ է:

10. Արդիականացված եւ ծառայության ժամկետը երկարաձգված արտադրանքի վրա տարածվում են համապատասխանության գնահատման այն նույն ընթացակարգերը, որոնք տարածվում են նոր պատրաստված արտադրանքի վրա:

11. Փորձարկումների տեսակներն ու ծավալը որոշվում են հետազոտությունների (փորձարկումների) եւ չափումների կանոններ եւ մեթոդներ, այդ թվում՝ ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգը կիրառելու ու կատարելու եւ ՄՄՀ-ի կողմից հաստատվող ցանկով սահմանված արտադրանքի համապատասխանության գնահատում (հավաստում) իրականացնելու համար անհրաժեշտ նմուշառման կանոններ պարունակող ստանդարտներով:

Համապատասխանության գնահատման աշխատանքների իրականացման ժամկետները որոշվում են սերտիֆիկացման մարմնի եւ հայտատուի միջեւ պայմանագրով:

Համապատասխանության սերտիֆիկատի տրամադրման ժամկետը չպետք է գերազանցի սերտիֆիկացման մարմնի կողմից փորձարկումների արձանագրությունները եւ, անհրաժեշտության դեպքում, սերտիֆիկացման ժամանակ հայտնաբերված անհամապատասխանությունների վերացման մասին փաստաթղթերն ստանալու ամսաթվից 15 աշխատանքային օրը:

Համապատասխանության սերտիֆիկատի գործողության ժամկետը կազմում է 5 տարուց ոչ ավելի:

12. Հայտարարագրման ժամանակ հայտատու կարող է լինել ՄՄ անդամ

պետությունների օրենսդրությանը համապատասխան ՄՄ-ի տարածքում գրանցված իրավաբանական անձը (ֆիզիկական անձը՝ որպես անհատ ձեռնարկատեր), որը պատրաստող կամ վաճառող կամ մատակարարվող արտադրանքի՝ ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության ապահովման եւ մատակարարվող արտադրանքի՝ ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին անհամապատասխանության համար պատասխանատվության մասով իր հետ կնքած պայմանագրի հիման վրա օտարերկրյա պատրաստողի գործառույթներն իրականացնող անձ է:

13. Համապատասխանության հայտարարագրումը ներառում է հետեւյալ տեսակի աշխատանքները՝

ա) համապատասխանության մասին հայտարարագիր ընդունող հայտատուի կողմից արտադրանքի համապատասխանությունը հավաստող փաստաթղթերի լրակազմի ձեւավորումը.

բ) հավատարմագրված փորձարկման լաբորատորիայում (կենտրոնում) արտադրանքի նմուշի փորձարկումը, եթե դա նախատեսված է հայտարարագրման սխեմայով.

գ) հայտատուի կողմից որակի կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմին հայտ ներկայացնելը եւ որակի կառավարման համակարգի սերտիֆիկացման իրականացումը, եթե դա նախատեսված է հայտարարագրման սխեմայով.

դ) հայտատուի կողմից համապատասխանության մասին հայտարարագրի ընդունումը.

ե) համապատասխանության մասին հայտարարագրի եւ կից փաստաթղթերի գրանցման համար սերտիֆիկացման մարմին հայտ ներկայացնելը.

զ) սերտիֆիկացման մարմնի կողմից՝ ներկայացված փաստաթղթերի

ամբողջականության, ինչպես նաև համապատասխանության մասին հայտարարագրի լրացման ճշտության ստուգումը.

է) համապատասխանության մասին հայտարարագրի գրանցումը.

ը) համապատասխանության հայտարարագրման արդյունքների մասին տեղեկացնելը.

թ) որակի կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմնի կողմից որակի կառավարման համակարգի նկատմամբ տեսչական հսկողությունը, եթե դա նախատեսված է հայտարարագրման սխեմայով.

ժ) այն արտադրանքի նկատմամբ հսկողությունը, որի համապատասխանությունը հավաստված է համապատասխանության մասին հայտարարագրով:

14. Համապատասխանության հայտարարագրման ժամանակ համապատասխանության մասին հայտարարագիր ընդունող հայտատուն սեփական ապացույցների հիման վրա ինքնուրույն ձեւավորում է ապացուցողական նյութերի լրակազմը, որը պարունակում է՝

ա) հիմնադիր փաստաթղթերը.

բ) կոնստրուկտորական եւ տեխնոլոգիական փաստաթղթերը.

գ) անվտանգության հիմնավորումը.

դ) արտադրանքի տիպային նմուշների ընտրության մասին ակտը.

ե) հայտատուի սեփական լաբորատորիայում ստացված՝ արտադրանքի փորձարկման արձանագրությունները.

զ) կազմակերպության ստանդարտը կամ տեխնիկական պայմանները, որոնցով արտադրվում է արտադրանքը.

է) արտադրանքի անվտանգության վրա ընդհանուր առմամբ ազդող բաղկացուցիչ մասերի անվտանգությունը հավաստող փաստաթղթերը.

ը) որակի կառավարման համակարգի սերտիֆիկատը, որի համար նշված սերտիֆիկատը տրամադրած սերտիֆիկացման մարմնի կողմից նախատեսվում է սերտիֆիկացված արտադրանքի նկատմամբ հսկողություն (այսուհետ՝ տեսչական հսկողություն)։

թ) մյուս փաստաթղթերը (փորձահավանության արժանացած մեթոդակարգերով իրականացված հաշվարկների, անալոզների շահագործման արդյունքներ), որոնք հայտատուի կողմից օգտագործվել են արտադրանքի համապատասխանությունը հավաստելու նպատակով։

15. Արտադրանքի համապատասխանության հայտարարագրման ժամանակ հայտատուն սեփական եւ սերտիֆիկացման մարմնի եւ (կամ) հավատարմագրված փորձարկման լաբորատորիայի (կենտրոնի) մասնակցությամբ ձեռք բերված ապացույցների հիման վրա, ի լրումն սույն հոդվածի 14-րդ կետին համապատասխան ձեւավորված սեփական ապացույցների, ապացուցողական նյութերում ներառում է հավատարմագրված փորձարկման լաբորատորիայում (կենտրոնում) անցկացված հետազոտությունների (փորձարկումների) եւ չափումների արձանագրությունները։

Համապատասխանության հայտարարագրման ժամանակ արտադրանքի նույնականացումն իրականացնում է հավատարմագրված փորձարկման լաբորատորիան (կենտրոնը)։

Փորձարկումներ կատարելու նպատակով արտադրանքի նմուշառումն իրականացվում է հետազոտությունների (փորձարկումների) եւ չափումների կանոններ եւ մեթոդներ, այդ թվում՝ սույն Տեխնիկական կանոնակարգը կիրառելու ու կատարելու եւ ՄՄՀ-ի կողմից հաստատվող ցանկով սահմանված արտադրանքի համապատասխանության գնահատում (հավաստումը) իրականացնելու համար անհրաժեշտ նմուշառման կանոններ պարունակող ստանդարտներով սահմանված պահանջներին համապատասխան։ Փորձարկումներ կատարելու նպատակով վերցված արտադրանքի նմուշները

կոնստրուկցիայով, կազմով եւ պատրաստման տեխնոլոգիայով պետք է լինեն այն արտադրանքի հետ նույնական, որը մատակարարվում է սպառողին (պատվիրատուին):

Համապատասխանության հայտարարագրման սխեմաների ցանկը ներկայացված է 9-րդ հավելվածում:

16. Համապատասխանության մասին հայտարարագրի գործողության ժամկետը կազմում է 5 տարուց ոչ ավելի:

17. Պատրաստողի կողմից համապատասխանության մասին հայտարարագրերի եւ (կամ) համապատասխանության սերտիֆիկատների վավերացված պատճենները կցվում են արտադրանքի ուղեկցող փաստաթղթերին:

18. Այն դեպքում, երբ հայտատուն արտադրանքի համապատասխանությունը հավաստելիս չի կիրառում կամ մասամբ է կիրառում ստանդարտները, ապա հայտի հետ միասին նա ներկայացնում է՝

ա) արտադրանքի՝ ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության ապացույց.

բ) հավատարմագրված փորձարկման լաբորատորիաներում (կենտրոններում) իրականացված հետազոտությունների (փորձարկումների) մասին տեղեկություններ.

գ) որակի կառավարման համակարգի համապատասխանության սերտիֆիկատ:

19. Նորարարական արտադրանքի սերտիֆիկացման համար հայտատուն հայտն ուղարկում է սերտիֆիկացման մարմին եւ ներկայացնում է տեխնիկական փաստաթղթեր, այդ թվում՝ առաջարկվող նորարարական արտադրանքի տեխնիկական լուծումների անվտանգության մասին հիմնավորում: Սերտիֆիկացման մարմինը քննարկում է ներկայացված նյութերը եւ

անվտանգության պահանջների թույլատրելի ցուցանիշներից շեղումների առկայության դեպքում դրանց ճշգրտման վերաբերյալ առաջարկն ուղարկում է ՄՄ անդամ պետությունների՝ երկաթուղային տրանսպորտի ոլորտում պետական քաղաքականության մշակման եւ նորմատիվ-իրավական կարգավորման գործառույթներ իրականացնող մարմիններին:

ՄՄ անդամ պետությունների՝ երկաթուղային տրանսպորտի ոլորտում պետական քաղաքականության մշակման եւ նորմատիվ-իրավական կարգավորման գործառույթներ իրականացնող մարմինները նշված արժեքների մասին հիմնավորումների հիման վրա ՄՄ անդամ պետությունների կողմից սահմանված կարգով մշակում եւ հաստատում են անվտանգության ապահովման նպատակով նորարարական արտադրանքի փորձնական խմբաքանակին ներկայացվող պահանջները, այդ թվում՝ հսկողության մեթոդներն ու նորարարական արտադրանքի անվտանգության ապացույցների համար անհրաժեշտ փորձարկումների ծավալը սահմանող ստանդարտները:

Սերտիֆիկացման մարմինը նորարարական արտադրանքի փորձարկումների դրական արդյունքների հիման վրա, հաստատված ստանդարտներին համապատասխան, որոշում է կայացնում հայտատուին նորարարական արտադրանքի խմբաքանակի համար համապատասխանության սերտիֆիկատ տրամադրելու մասին: Համապատասխանության սերտիֆիկատում նշվում է նորարարական արտադրանքի նմուշների թիվը եւ համապատասխանության սերտիֆիկատի գործողության ժամկետը: Նորարարական արտադրանքի նմուշների համապատասխանության սերտիֆիկատի գործողության ժամկետը պետք է լինի 2 տարուց ոչ ավելի:

20. Հայտատուն, ՄՄ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան, իրավունք ունի սերտիֆիկացման մարմինների եւ հավատարմագրված փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) ոչ իրավաչափ գործողությունների դեմ բողոքներ բերել հավատարմագրման մարմին:

21. Սերտիֆիկացման իրականացման ընթացակարգը ներառում է՝

ա) հայտատուի կողմից սերտիֆիկացման մարմին արտադրանքի սերտիֆիկացում իրականացնելու մասին հայտ ներկայացնելը.

բ) սերտիֆիկացման մարմնի կողմից սերտիֆիկացում իրականացնելու մասին հայտը գնահատելը, նշված հայտի վերաբերյալ որոշում կայացնելը եւ հայտատուին այդ որոշումն ուղարկելը.

գ) սերտիֆիկացման մարմնի հետ կնքված պայմանագրի հիման վրա հավատարմագրված փորձարկման լաբորատորիայում (կենտրոնում) արտադրանքի փորձարկումների անցկացումը.

դ) արտադրանքի արտադրության վիճակի ստուգումը կամ որակի կառավարման համակարգի սերտիֆիկացումը կամ արտադրանքի արտադրությունը, եթե դա նախատեսված է սերտիֆիկացման սխեմայով.

ե) փորձարկումների արդյունքների փորձաքննությունը, արտադրանքի արտադրության վիճակի ստուգման կամ որակի կառավարման համակարգի սերտիֆիկացման կամ արտադրանքի արտադրության (դրանց իրականացման դեպքում) եւ մյուս ապացուցողական նյութերի փորձաքննությունը, ինչպես նաեւ համապատասխանության սերտիֆիկատ տալու մասին որոշում կայացնելը կամ համապատասխանության սերտիֆիկատ տրամադրելը մերժելու հիմքերը.

զ) համապատասխանության սերտիֆիկատի ձեւակերպումը, գրանցումը եւ տրամադրումը կամ հայտատուին համապատասխանության սերտիֆիկատի տրամադրման մերժումն ուղարկելը.

է) տեսչական հսկողության իրականացումը՝ սերտիֆիկացման սխեմաներին համապատասխան, ինչպես նաեւ համապատասխանության սերտիֆիկատի եւ ՄՄ անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանի կիրառումը:

22. Հայտատուն սերտիֆիկացում իրականացնելու համար ներկայացված

հայտը ձեակերպվում է ռուսերենով եւ, անհրաժեշտության դեպքում, ՄՄ անդամ պետությունների պետական լեզվով (լեզուներով), որը պետք է ներառի՝

ա) հայտատուի անվանումը, գտնվելու վայրը եւ վավերապայմանները.

բ) պատրաստողի անվանումը, գտնվելու վայրը եւ վավերապայմանները այն դեպքում, երբ հայտատուն արտադրանքը պատրաստողը չէ.

գ) արտադրանքի մասին տեղեկությունները եւ այն նույնականացնող նշանները (անվանումը, ծածկագիրը՝ ըստ ՄՄ արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի (այսուհետ՝ ՄՄ ԱՏԳ ԱԱ), արտադրանքի տեխնիկական նկարագիրը, դրա կիրառման (շահագործման) վերաբերյալ ցուցումները եւ սույն հոդվածի 23-րդ եւ 25-րդ կետերին համապատասխան արտադրանքը նկարագրող տեխնիկական մյուս փաստաթղթերը, ինչպես նաեւ հայտարարագրվող քանակը (սերիական արտադրությունը, արտադրանքի խմբաքանակը կամ միավորը).

դ) մատնանշում ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգի այն դրույթներին, որի պահանջներին է համապատասխանում ներկայացվող արտադրանքը.

ե) սերտիֆիկացման սխեման.

զ) հայտատուի՝ սերտիֆիկացման կանոններն ու պայմանները կատարելու պարտավորությունը.

է) հայտատուի հայեցողությամբ լրացուցիչ տեղեկություններ.

ը) հայտին կցվող փաստաթղթերի ցանկը:

23. Նոր մշակվող արտադրանքի սերտիֆիկացում իրականացնելու մասին հայտի հետ հայտատուն սերտիֆիկացման մարմին է ներկայացնում հետեւյալ փաստաթղթերը՝

ա) արտադրանքի նմուշի ստեղծման տեխնիկական առաջադրանքը (դրա առկայության դեպքում).

բ) արտադրանքի տեխնիկական պայմանները.

գ) նախնական փորձարկումների ծրագիրը.

դ) նախնական փորձարկումների արձանագրությունը.

ե) հաշվի առնված շահագործման փաստաթղթերի լրակազմը.

զ) ընդունման փորձարկումներ անցկացնելու համար արտադրանքի նմուշի պատրաստ լինելու մասին ակտը.

է) ընդունման փորձարկումներ անցկացնելու ծրագիր-ժամանակացույցը.

ը) ընդունման փորձարկումների ծրագիրը.

թ) ընդունման փորձարկումների արձանագրությունը.

ժ) ընդունող հանձնաժողովի ակտը.

ժա) ընդունող հանձնաժողովի կողմից հայտնաբերված թերությունների վերացման միջոցառումների ծրագիրը (առկայության դեպքում) եւ դրա իրականացումը հավաստող փաստաթղթերը.

ժբ) կոնստրուկտորական փաստաթղթերի հսկիչ լրակազմով սահմանված կարգով ստուգումն ավարտելու եւ սերիական արտադրության արտադրանքը հավաստելու մասին ծանուցումը.

ժգ) ՄՄ անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանի զետեղման եղանակի եւ տեղի մասին առաջարկությունը:

24. Ընդունման եւ սերտիֆիկացման փորձարկումները համատեղելու մասին որոշում ընդունելու դեպքում սույն հոդվածի 23-րդ կետի «բ», «ե», «թ»-«ժա» ենթակետերում նշված փաստաթղթերը ներկայացվում են ընդունման փորձարկումներն անցկացնելուց եւ հայտնաբերված թերությունների վերացման միջոցառումների ծրագիրն իրականացնելուց հետո:

25. Սերիական թողարկման արտադրանքի համար սերտիֆիկացում իրականացնելու մասին հայտի հետ հայտատուն սերտիֆիկացման մարմին է

ներկայացնում հետեւյալ փաստաթղթերը՝

- ա) արտադրանքի տեխնիկական պայմանները.
- բ) կոնստրուկտորական եւ տեխնոլոգիական փաստաթղթերը (սերտիֆիկացման մարմնի հետ համաձայնեցված ծավալով).
- գ) ընդունման (որակավորման) փորձարկումների արձանագրությունը.
- դ) որակավորման հանձնաժողովի ակտը, իսկ առաջնային սերտիֆիկացման դեպքում՝ նաեւ ընդունող հանձնաժողովի ակտը.
- ե) ընդունող հանձնաժողովի կողմից հայտնաբերված թերությունների վերացման միջոցառումների ծրագիրը (առկայության դեպքում) եւ դրա իրականացումը հավաստող փաստաթղթերը.
- զ) պարբերական եւ տիպային փորձարկումների անցկացման վերաբերյալ հաշվետվությունները.
- է) արտադրանքի արտադրության վիճակի գնահատման հարցաթերթը.
- ը) արտադրանքի թողարկման ծավալը.
- թ) բողոքագրերի վերաբերյալ տեղեկությունները.
- ժ) ՄՄ անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանի զետեղման եղանակի եւ տեղի մասին առաջարկությունը:

26. Սույն հոդվածի 23-րդ եւ 25-րդ կետերում նշված փաստաթղթերը ձեւակերպվում են՝ նշելով հայտատուի վավերապայմաններն ու նույնականացման համարը եւ վավերացվում են հայտատուի ստորագրությամբ:

Ապացուցողական փաստաթղթերի պատճենները դակվում եւ վավերացվում են հայտատուի ստորագրությամբ եւ կնիքով: Եթե դրանք դակված չեն, ապա փաստաթղթի յուրաքանչյուր թերթ վավերացվում է: Ապացուցողական բոլոր փաստաթղթերը ենթակա են սերտիֆիկացման մարմնի համապատասխան գործերում պահման՝ ՄՄ անդամ պետությունների օրենսդրությանը

համապատասխան:

27. Արտադրանքի սերտիֆիկացման ժամանակ հաշվի են առնվում ընդունման եւ մյուս փորձարկումների արդյունքները՝ պայմանով, որ դրանք անցկացվել են հավատարմագրված փորձարկման լաբորատորիաներում (կենտրոններում) սերտիֆիկացման մարմնի հետ համաձայնեցված ծրագրով: Այդ դեպքում հայտատուն սերտիֆիկացում իրականացնելու մասին հայտը պետք է ներկայացնի մինչեւ փորձարկումներն անցկացնելը եւ սերտիֆիկացման մարմին ներկայացնի փորձարկումների անցկացման ժամանակացույցը: Փորձարկման լաբորատորիան (կենտրոնը) պետք է փորձարկումների մեկնարկի եւ դրանց անցկացման ընթացքի մասին տեղեկացնի սերտիֆիկացման մարմնին: Նշված փորձարկումները կարող են հաշվի առնվել սերտիֆիկացման ժամանակ միայն այն դեպքում, երբ դրանց արդյունքների համաձայն արտադրանքի կոնստրուկցիայի եւ դրա պատրաստման տեխնոլոգիայի մեջ չեն կատարվել այնպիսի էական փոփոխություններ, որոնք պահանջում են կրկնակի փորձարկումների անցկացում:

28. Սերտիֆիկացման մարմինը քննարկում է սերտիֆիկացում իրականացնելու մասին հայտը եւ այն ստանալուց հետո մեկ ամիսը չգերազանցող ժամկետում իր որոշման մասին հայտնում է հայտատուին:

29. Սերտիֆիկացում իրականացնելու մասին հայտի վերաբերյալ կայացված դրական որոշումը պետք է իր մեջ ներառի սերտիֆիկացման հիմնական պայմանները, այդ թվում՝ տեղեկություններ հետեւյալի մասին՝

- ա) սերտիֆիկացման սխեմա
- բ) սերտիֆիկացում իրականացնելու ժամկետները.
- գ) նորմատիվային փաստաթղթերը, որոնց հիման վրա կիրականացվի արտադրանքի սերտիֆիկացումը.
- դ) արտադրանքի արտադրության վիճակի ստուգում անցկացնող

կազմակերպությունը, եթե դա նախատեսված է սերտիֆիկացման սխեմայով.

ե) արտադրանքի նմուշառման կարգը.

զ) արտադրանքի նմուշների փորձարկումների անցկացման կարգը.

է) արտադրանքի արտադրության պայմանների կայունության գնահատման կարգը.

ը) արտադրանքի համապատասխանության գնահատման չափորոշիչները.

թ) տեսչական ստուգում անցկացնելու պայմանները:

30. Սերտիֆիկացման մարմնի կողմից սերտիֆիկացում իրականացնելը մերժելու մասին որոշում կայացնելու հիմքերն են՝

ա) սույն հոդվածի 22-րդ, 23-րդ եւ 25-րդ կետերում նշված փաստաթղթերը չներկայացնելը կամ ոչ ամբողջ ծավալով ներկայացնելը.

բ) ներկայացված փաստաթղթերում պարունակվող տեղեկությունների անարժանահավատությունը:

31. Սերտիֆիկացում իրականացնելու ժամանակ արտադրանքի նույնականացում եւ արտադրանքի նմուշառում իրականացնում է սերտիֆիկացման մարմինը: Փորձարկումներ կատարելու նպատակով արտադրանքի նմուշառումն իրականացվում է հետազոտությունների (փորձարկումների) եւ չափումների կանոններ եւ մեթոդներ, այդ թվում՝ ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգը կիրառելու ու կատարելու եւ ՄՄՀ-ի կողմից հաստատվող ցանկով սահմանված արտադրանքի համապատասխանության գնահատում (հավաստում) իրականացնելու համար անհրաժեշտ նմուշառման կանոններ պարունակող ստանդարտներով սահմանված պահանջներին համապատասխան:

Փորձարկումներ կատարելու նպատակով վերցված արտադրանքի նմուշները կոնստրուկցիայով, կազմով եւ պատրաստման տեխնոլոգիայով պետք է լինեն այն

արտադրանքի հետ նույնական, որը նախատեսված է սպառողին (պատվիրատուին) մատակարարելու համար:

32. Նմուշների ընտրության մասին ակտը պետք է պարունակի՝

- ա) նմուշների ընտրության մասին ակտի կազմման համարը եւ ամսաթիվը.
- բ) այն կազմակերպության անվանումը եւ հասցեն, որտեղ կատարվում է նմուշառումը.
- գ) արտադրանքի անվանումը.
- դ) չափումների մեծությունների միավորը.
- ե) խմբաքանակի չափը (ծավալը), որից կատարվել է ընտրությունը.
- զ) խմբաքանակի արտաքին տեսազննման արդյունքը (արտաքին տեսքը, փաթեթվածքի եւ մականշվածքի վիճակը, տեսողական հսկողությամբ որոշվող՝ սերտիֆիկացման ցուցանիշների գնահատման արդյունքները).
- է) խմբաքանակի պատրաստման ամսաթիվը.
- ը) այն նորմատիվ փաստաթղթի նշագիրը եւ անվանումը, որին համապատասխան նմուշները վերցվել են.
- թ) վերցված նմուշների թիվը եւ համարը.
- ժ) նմուշառման վայրը.
- ժա) արտադրանքի վերջնական ընդունման մասին պատրաստողի փաստաթղթերը.
- ժբ) սերտիֆիկացման մարմնի ներկայացուցիչների եւ հայտատուի վավերապայմանները եւ ստորագրությունները:

33. Համապատասխանության պարտադիր հաստատման ենթակա բաղկացուցիչ մասեր պարունակող արտադրանքի նմուշների ընտրության մասին ակտին կցվում են առանձին բաղկացուցիչ մասերի համապատասխանության

սերտիֆիկատների (համապատասխանության մասին հայտարարագրերի) ցանկը եւ այն գծագրերի ցանկը, որոնց համաձայն դրանք պատրաստվում են:

Արտադրանքի վերցված նմուշները մակնշում եւ ուղարկում են փորձարկման ուղեկցող նամակի եւ հանձնման ակտի հետ: Անհրաժեշտության դեպքում վերցված արտադրանքի մաս կազմող առանձին բաղկացուցիչ մասերը կարող են կապարակնքվել, ինչպես նաեւ մակնշվել:

34. Նույնականացում իրականացվելու դեպքում արտադրանքի նմուշների՝ սերտիֆիկացում անցկացնելու մասին հայտում նշված հիմնական բնութագրերը համեմատում են մականշվածքում եւ ուղեկցող փաստաթղթերում ներկայացված փաստացի բնութագրերի հետ, որոնք ներառում են՝

- ա) անվանումը, տիպը, մոդելը եւ մոդիֆիկացիան,
- բ) պատրաստողի անվանումը կամ արտադրանքի ծագման մասին տվյալները,
- գ) փաստաթուղթը, որով թողարկվում է արտադրանքը,
- դ) նշանակության վերաբերյալ ցուցանիշները եւ այլ հիմնական ցուցանիշներ,
- ե) համապատասխան խմբաքանակին պատկանելը,
- զ) համապատասխան տեխնոլոգիական գործընթացին պատկանելը:

35. ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին արտադրանքի համապատասխանությունը սահմանվում է հավատարմագրված փորձարկման լաբորատորիաներում (կենտրոններում) անցկացվող՝ անհրաժեշտ տեսակների եւ կատեգորիաների փորձարկումների արդյունքների հիման վրա:

Արտադրանքի սահմանափակ խմբաքանակի, բացառությամբ երկաթուղային շարժակազմի միավորների, ինչպես նաեւ անվազույզների եւ դրանք համալրող, ինքնակցիչ սարքվածքների, ուղեւորատար վագոնների սայլակների շրջանակների, բեռնատար վագոնների սայլակների կողային շրջանակների ու

զսպանակավորված հեծանների, բարձրավոլտ շղթաների պաշտպանիչ ապարատների, համապատասխանության պարտադիր հավաստման դեպքում սերտիֆիկացման մարմինն իրավասու է ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին արտադրանքի համապատասխանությունը հավաստող այլ փաստաթղթերի հետ մեկտեղ ուսումնասիրել երրորդ երկրներում անցկացված արտադրանքի փորձարկումների արձանագրությունները՝ պայմանով, որ այդ փորձարկումներն անցկացված լինեն ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգի եւ ստանդարտների պահանջները հաշվի առնելով: Անհրաժեշտության դեպքում անցկացվում են լրացուցիչ փորձարկումներ:

36. Արտադրանքի նմուշների սերտիֆիկացման նպատակներով չեն ուսումնասիրվում 5 տարուց ավելի վաղեմություն ունեցող փորձարկումների արդյունքները:

37. 2-րդ եւ 3-րդ հավելվածներում նշված՝ կոնստրուկտորական փաստաթղթերի մշակվող արտադրանքը, որին տրված է «O» լիտերը, ենթակա չէ սերտիֆիկացման:

ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության սերտիֆիկատի առկայությունը 2-րդ եւ 3-րդ հավելվածներում նշված մյուս արտադրանքի համար պարտադիր է:

38. Հավատարմագրված փորձարկման լաբորատորիայի (կենտրոնի) բացակայության դեպքում թույլատրվում է սերտիֆիկացման նպատակով փորձարկումների անցկացումը զուտ տեխնիկական կոմպետենտության ապահովման մասով հավատարմագրված փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) կողմից: Այդ փորձարկումներն անցկացվում են սերտիֆիկացման մարմնի ներկայացուցիչների հսկողությամբ: Այդ փորձարկումների օբյեկտիվությունը զուտ տեխնիկական կոմպետենտության ապահովման մասով հավատարմագրված փորձարկման լաբորատորիայի (կենտրոնի) հետ ապահովում է սերտիֆիկացման մարմինը, որը դրանց անցկացումը

հանձնարարել է տվյալ փորձարկման լաբորատորիային (կենտրոնին):

39. Փորձարկումների արձանագրությունը պետք է ներառի՝

ա) փաստաթղթի անվանումը եւ նշագիրը, ընդ որում փաստաթղթի նշագիրը յուրաքանչյուր էջում կրկնվում է.

բ) հավատարմագրված փորձարկման լաբորատորիայի (կենտրոնի) անվանումը եւ հասցեն, տեղեկություններ դրա հավատարմագրման մասին (հավատարմագրման վկայագրի համարը, տրամադրման ամսաթիվը եւ գործողության ժամկետը).

գ) փորձարկումների անցկացումը հանձնարարած սերտիֆիկացման մարմնի մասին տեղեկություններ.

դ) հայտատուի անվանումը եւ հասցեն.

ե) նշագիրը (նկարագրությունը, մականշվածքը), նույնականացման արդյունքները, պատրաստողի մասին տեղեկություններ եւ արտադրանքի պատրաստման ամսաթիվը.

զ) փորձարկումների անցկացման համար արտադրանքը ստանալու ամսաթիվը.

է) ստուգման ենթակա ցուցանիշները եւ դրանց ներկայացվող պահանջները, ինչպես նաեւ տեղեկություններ այն նորմատիվ փաստաթղթերի մասին, որոնք ներառում են այդ պահանջները.

ը) փորձարկումների անցկացման ամսաթիվը.

թ) փորձարկումների ժամանակ օգտագործված՝ փորձարկումների ստանդարտ եւ ոչ ստանդարտ մեթոդները եւ մեթոդակարգերը.

ժ) նախքան փորձարկման անցկացումը արտադրանքը շրջակա միջավայրի պայմաններում պահելու, ինչպես նաեւ արտադրանքը փորձարկումների համար նախապատրաստելու մասին տեղեկություններ.

ժա) օգտագործված սեփական եւ վարձակալված չափման միջոցների եւ փորձարկման սարքավորման մասին տեղեկություններ.

ժբ) այլ հավատարմագրված փորձարկման լաբորատորիայի (կենտրոնի) կողմից իրականացված փորձարկումների մասին տեղեկություններ.

ժգ) փորձարկումների իրականացման արդյունքները, որոնք անհրաժեշտության դեպքում, հիմնավորվում են աղյուսակներով, գրաֆիկներով, լուսանկարներով եւ այլ նյութերով.

ժդ) հայտարարություն նրա մասին, որ փորձարկումների արձանագրությունը վերաբերում է միայն փորձարկումների ենթարկված նմուշներին.

ժե) ապացուցողական նյութերը՝ ըստ ստացված արդյունքների, այդ թվում՝ գրանցված առաջնային տվյալները՝ աղյուսակների եւ (կամ) գրաֆիկների տեսքով.

ժզ) առաջնային տվյալների մշակում անցկացնելու ընթացակարգը՝ նշելով մշակման բոլոր չափորոշիչները եւ ստացված միջանկյալ տվյալները.

ժէ) հավատարմագրված փորձարկման լաբորատորիայի (կենտրոնի) ղեկավարի՝ կազմակերպության կնիքով հաստատված ստորագրությունը.

ժը) փորձարկումներն անցկացրած պատասխանատու կատարողների ստորագրությունները եւ պաշտոնները.

ժթ) (անհրաժեշտության դեպքում) հավատարմագրված փորձարկման լաբորատորիայի (կենտրոնի) անունից փորձարկումների արձանագրությունը նախապատրաստելու համար պատասխանատու անձի (անձանց) ստորագրությունը եւ պաշտոնը.

ի) սերտիֆիկացման մարմնի ներկայացուցչի ստորագրությունը՝ ընդունման եւ սերտիֆիկացման փորձարկումների համատեղության դեպքում, ինչպես նաեւ սույն հոդվածի 38-րդ կետին համապատասխան փորձարկումների անցկացման դեպքում.

իա) փորձարկումների արձանագրության (հաշվետվության) թողարկման ամսաթիվը.

իբ) տեղեկություններ նրա մասին, որ փորձարկումների արձանագրության (հաշվետվության) մեջ փոփոխությունների կատարումը ձեւակերպվում է առանձին փաստաթղթով (հաշվետվության հավելված, նախորդ արձանագրությունը չեղարկող եւ փոխարինող նոր արձանագրություն).

իգ) փորձարկումների արձանագրության մասնակի վերատպման հնարավորությունը բացառող հայտարարություն:

40. Փորձարկումների արձանագրությանը պետք է կցվի նմուշառման ակտի հաստատված պատճենը եւ փորձարկումների համար արտադրանքը պատրաստ լինելու մասին ակտի պատճենը:

Փորձարկումների արձանագրությունը չպետք է ներառի փորձարկումների ստացված արդյունքներից բխող առաջարկություններ կամ առաջարկներ:

41. Սույն հոդվածի 39-րդ կետի պահանջներին համապատասխան ձեւակերպված փորձարկումների արձանագրությունների բնօրինակները ներկայացնում են սերտիֆիկացման մարմին 2 օրինակից (առաջինն ուղարկվում է սերտիֆիկացման գործին կցելու համար, երկրորդն ուղարկվում է հայտատուին): Փորձարկումների արձանագրությունների պատճենները հավատարմագրված փորձարկման լաբորատորիայում (կենտրոնում) պահման ենթակա են համապատասխանության սերտիֆիկատի գործողության ժամկետից ոչ պակաս ժամկետով, եթե համապատասխան նորմատիվ փաստաթղթերով եւ հավատարմագրված փորձարկման լաբորատորիայի (կենտրոնի) փաստաթղթերով այլ բան սահմանված չէ:

42. Արտադրանքի արտադրության վիճակի ստուգումն անցկացվում է սերտիֆիկացման ժամանակ ստուգվող կայուն բնութագրերով արտադրանքի պատրաստման համար անհրաժեշտ պայմանների սահմանման նպատակով:

43. Արտադրության վիճակի ստուգումը պետք է իրականացվի ոչ շուտ, քան համապատասխանության սերտիֆիկատի տրամադրման օրվանից 6 ամիս առաջ, եթե այդ ստուգումը նշված է սերտիֆիկացման սխեմայում:

44. Արտադրանքի արտադրության վիճակի ստուգումն անցկացվում է հետևյալի առնչությամբ՝

- ա) տեխնոլոգիական գործընթացները,
- բ) տեխնոլոգիական փաստաթղթերը,
- գ) տեխնոլոգիական սարքավորման միջոցները,
- դ) տեխնոլոգիական ռեժիմները,
- ե) տեխնոլոգիական սարքավորման միջոցների կառավարումը,
- զ) չափագիտական սարքավորումների կառավարումը,
- է) փորձարկումների եւ չափումների մեթոդակարգերը,
- ը) հումքի եւ համալրող արտադրատեսակների հսկողության անցկացման կարգը,
- թ) արտադրության գործընթացում արտադրանքի հսկողության իրականացման կարգը,
- ժ) ոչ համապատասխան արտադրանքի կառավարումը,

ժա) բողոքագրերի հետ աշխատանքի կարգը:

45. Արտադրանքի արտադրության վիճակի ստուգման արդյունքներով կազմվում է սերտիֆիկացվող արտադրանքի արտադրության վիճակի ստուգման արդյունքների մասին ակտ, որում նշվում են՝

- ա) ստուգման արդյունքները,
- բ) արտադրանքի արտադրության վիճակի ստուգման ժամանակ օգտագործված լրացուցիչ նյութերը,

գ) արտադրանքի արտադրության վիճակի ընդհանուր գնահատականը,

դ) ուղղիչ միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը եւ ժամկետները:

46. Սերտիֆիկացվող արտադրանքի արտադրության վիճակի ստուգման արդյունքների մասին ակտը պահվում է սերտիֆիկացման մարմնում, իսկ դրա պատճենն ուղարկվում է հայտատուին:

47. Փորձարկումների արձանագրության (հաշվետվության) եւ արտադրանքի արտադրության վիճակի ստուգման արդյունքների (եթե դա սահմանված է սերտիֆիկացման սխեմայով եւ պայմանագրով) վերլուծությունից հետո սերտիֆիկացման մարմինը համապատասխանության սերտիֆիկատի տրամադրման (տրամադրումը մերժելու) մասին որոշում է պատրաստում:

48. Սերտիֆիկացման մարմնի կողմից համապատասխանության սերտիֆիկատի տրամադրումը մերժելու մասին որոշում կայացնելու հիմքերն են՝

ա) արտադրանքի՝ ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին անհամապատասխանությունը,

բ) արտադրանքի արտադրության վիճակի ստուգման (եթե դա սահմանված է սերտիֆիկացման սխեմայով) բացասական արդյունքը,

գ) ներկայացված փաստաթղթերում անարժանահավատ տեղեկատվության առկայությունը:

49. Համապատասխանության սերտիֆիկատի տրամադրման մասին որոշման հիման վրա սերտիֆիկացման մարմինը ձեւակերպում է համապատասխանության սերտիֆիկատը, սահմանված կարգով այն գրանցում է Միասնական ձեռով ձեւակերպված՝ տրված համապատասխանության սերտիֆիկատների եւ գրանցված համապատասխանության մասին հայտարարագրերի միասնական ռեեստրում եւ տրամադրում է հայտատուին: Սերտիֆիկատը վավերական է միայն գրանցման համարի առկայության դեպքում:

50. Համապատասխանության սերտիֆիկատներն ուժի մեջ են մտնում Միասնական ձեռով ձեւակերպված՝ տրված համապատասխանության սերտիֆիկատների եւ գրանցված համապատասխանության մասին հայտարարագրերի միասնական ռեեստրում գրանցվելու օրվանից:

Համապատասխանության սերտիֆիկատը կարող է ունենալ հավելված, որը ներառում է արտադրանքի որոշակի այնպիսի տեսակների եւ տիպերի ցանկ, որոնց վրա տարածվում է դրա գործողությունը:

51. Այն արտադրանքի համար, որի կազմում ընդգրկված են համապատասխանության պարտադիր հավաստման ենթակա բաղկացուցիչ մասեր, համապատասխանության սերտիֆիկատ կարող է տրամադրվել միայն այդ բաղկացուցիչ մասերի համապատասխանության սերտիֆիկատների կամ համապատասխանության մասին հայտարարագրերի առկայության դեպքում: Համապատասխանության սերտիֆիկատի հավելվածում նշում է կատարվում առ այն, որ ՄՄ անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով արտադրանքի մակնշումն իրականացվում է միայն համապատասխանության պարտադիր հավաստման ենթակա բաղկացուցիչ մասերի համապատասխանության սերտիֆիկատների կամ համապատասխանության մասին հայտարարագրերի առկայության դեպքում:

52. Առանձին բաղկացուցիչ մասերի համապատասխանության սերտիֆիկատ կամ համապատասխանության մասին հայտարարագիր չունեցող արտադրանքի փորձնական նմուշները թույլատրվում է հսկողության ներքո շահագործման մեջ դնել մինչեւ առանձին բաղկացուցիչ մասերի համապատասխանության սերտիֆիկատ կամ համապատասխանության մասին հայտարարագիր ստանալը:

53. Արտադրանքի կոնստրուկցիայում (կազմում) կամ դրա արտադրության տեխնոլոգիայում այնպիսի փոփոխություններ կատարելու դեպքում, որոնք կարող են ազդել արտադրանքի՝ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին

համապատասխանության վրա, հայտատուն դրա մասին նախօրոք տեղեկացնում է սերտիֆիկացման մարմնին, որը որոշում է կայացնում նոր փորձարկումներ կամ այդ արտադրանքի արտադրության վիճակի ստուգում անցկացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

54. Սերտիֆիկացված արտադրանքին կցվող շահագործման փաստաթղթերը (շահագործման ձեռնարկ, տեղեկամատյան [ֆորմուլյար], անձնագիր, մանեկապիտակ, պիտակ), ինչպես նաև ապրանքն ուղեկցող փաստաթղթերը պետք է ներառեն ՄՄ անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանը, անցկացված սերտիֆիկացման մասին նշում, ինչպես նաև համապատասխանության սերտիֆիկատի ձեւաթղթի հաշվառման համարը, դրա գրանցման համարը, տրամադրման ամսաթիվը եւ գործողության ժամկետը:

55. Համապատասխանության սերտիֆիկատի գործողությունը համապատասխանության սերտիֆիկատի սեփականատիրոջ հայտով կարող է երկարաձգվել 1 տարին չգերազանցող ժամկետով՝ կրկնակի սերտիֆիկացման աշխատանքներն ավարտելու համար՝ արտադրանքի կոնստրուկցիայում եւ պատրաստման տեխնոլոգիայում փոփոխությունների, սպառողների կողմից բողոքագրերի եւ պահանջների բացակայության, ինչպես նաև վերջին տեսչական հսկողության դրական արդյունքների դեպքում:

56. Համապատասխանության սերտիֆիկատի սեփականատերն իրավունք ունի տրամադրելու համապատասխանության սերտիֆիկատի՝ իր կողմից հաստատված պատճենները՝ ՄՄ մաքսային տարածքում դրանց օգտագործման նպատակով:

57. Տեսչական հսկողությունը, եթե դա նախատեսված է սերտիֆիկացման սխեմայով, իրականացնում է դրա սերտիֆիկացումն անցկացրած սերտիֆիկացման մարմինը: Տեսչական հսկողությունն անցկացվում է պարբերական եւ արտահերթ ստուգումների ձեւով, որոնք ապահովում են

սերտիֆիկացված արտադրանքի մասին՝ փորձարկումների եւ արտադրանքի արտադրության վիճակի ստուգման արդյունքների տեսքով, համապատասխանության սերտիֆիկատի եւ ՄՄ անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանի կիրառման պայմանների ու կանոնների պահպանման մասին տեղեկատվության ստացումը, հաստատելու համար, որ համապատասխանության սերտիֆիկատի գործողության ժամկետի ընթացքում արտադրանքը շարունակում է համապատասխանել ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին:

58. Տեսչական հսկողության պարբերականությունը եւ ծավալը որոշելու չափորոշիչներն են՝

- ա) արտադրանքի հավանական վտանգավորության աստիճանը,
- բ) անցկացված՝ արտադրանքի սերտիֆիկացման արդյունքները,
- գ) արտադրանքի արտադրության կայունությունը,
- դ) արտադրանքի թողարկման ծավալը,
- ե) արտադրանքի արտադրության որակի կառավարման սերտիֆիկացված համակարգի առկայությունը,
- զ) տեսչական հսկողության անցկացման արժեքը:

59. Տեսչական հսկողության անցկացման ծավալը, պարբերականությունը, բովանդակությունը եւ կարգը սահմանվում են համապատասխանության սերտիֆիկատի տրամադրման վերաբերյալ սերտիֆիկացման մարմնի որոշման մեջ:

60. Արտահերթ տեսչական հսկողություն իրականացվում է արտադրանքի անվտանգության առնչությամբ ներկայացված պահանջների վերաբերյալ տեղեկատվության (հավաստող փաստաթղթերի) առկայության դեպքում: Նշված տեղեկատվությունը կարող է ստացվել սպառողների կողմից, ինչպես այն արտադրանքի նկատմամբ պետական հսկողություն (վերահսկողություն)

իրականացնող մարմինների կողմից, որի համար տրվել է համապատասխանության սերտիֆիկատ: Արտադրանքի արտահերթ տեսչական հսկողության դեպքում աշխատանքների ծավալը որոշվում է արտադրանքի անվտանգության ապահովման հարցում հայտնաբերված թերությունների հետ կապված տեխնոլոգիական գործընթացների ստուգման անհրաժեշտությամբ, եւ պատրաստողի կողմից այն իրականացվում է անհատույց հիմունքներով:

61. Տեսչական հսկողությունը ներառում է՝

- ա) արտադրանքի սերտիֆիկացման նյութերի վերլուծություն,
- բ) սերտիֆիկացված արտադրանքի վերաբերյալ ստացվող տեղեկատվության վերլուծություն,
- գ) սերտիֆիկացված արտադրանքի փաստաթղթերի՝ ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության ստուգում,
- դ) նմուշառում եւ նմուշների նույնականացում, նմուշների փորձարկումների իրականացում եւ ստացված արդյունքների վերլուծություն,
- ե) արտադրանքի կոնստրուկցիայում եւ պատրաստման տեխնոլոգիայում սերտիֆիկացում անցկացնելու ժամանակ արձանագրված այնպիսի փոփոխությունների կատարման բացակայության ստուգում, որոնք ազդում են արտադրանքի անվտանգության ցուցանիշների վրա,
- զ) արտադրանքի արտադրության վիճակի ստուգում (եթե դա նախատեսված է սերտիֆիկացման սխեմայով),
- է) նախկինում հայտնաբերված անհամապատասխանությունների վերացմանն ուղղված ուղղիչ գործողությունների ստուգում,
- ը) արտադրանքի եւ ուղեկցող փաստաթղթերի՝ ՄՄ անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության նշանով մակնշման ճշգրտության ստուգում,

թ) սերտիֆիկացված արտադրանքի վերաբերյալ բողոքագրերի վերլուծություն:

62. Տեսչական հսկողության իրականացման դեպքում փորձարկումների անցկացման բովանդակությունը, ծավալը եւ կարգը որոշում է հսկողությունն իրականացնող սերտիֆիկացման մարմինը:

63. Տեսչական հսկողության արդյունքները ձեակերպում են տեսչական հսկողություն իրականացնելու մասին ակտով:

Տեսչական հսկողություն իրականացնելու մասին ակտում սույն հոդվածի 62-րդ կետին համապատասխան կատարված աշխատանքների հիման վրա եզրակացություն է արվում արտադրանքի՝ ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության, դրանց կատարման կայունության եւ տրված համապատասխանության սերտիֆիկատի պահպանման հնարավորության վերաբերյալ կամ համապատասխանության սերտիֆիկատի գործողությունը կասեցնելու (վերացնելու) վերաբերյալ:

64. Տեսչական հսկողության արդյունքներով կարող է կայացվել հետեւյալ որոշումներից մեկը՝

ա) համապատասխանության սերտիֆիկատը շարունակում է գործել, եթե արտադրանքը համապատասխանում է ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին.

բ) համապատասխանության սերտիֆիկատի գործողությունը կասեցվում է, եթե ուղղիչ միջոցառումների միջոցով հայտատուն կարող է վերացնել արտադրանքի՝ ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին անհամապատասխանության հայտնաբերված պատճառները.

գ) համապատասխանության սերտիֆիկատի գործողությունը կասեցվում է, եթե ուղղիչ միջոցառումների միջոցով հայտատուն չի կարող վերացնել արտադրանքի՝ ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին

անհամապատասխանության հայտնաբերված պատճառները:

65. Համապատասխանության սերտիֆիկատի գործողության կասեցումն ուժի մեջ է մտնում Միասնական ձեռով ձեւակերպված՝ տրված համապատասխանության սերտիֆիկատների եւ գրանցված համապատասխանության մասին հայտարարագրերի միասնական ռեեստրում համապատասխան նշում կատարվելու օրվանից:

66. Նշված ժամկետում համապատասխանության սերտիֆիկատի սեփականատիրոջ մեղքով տեսչական հսկողության իրականացման անհնարինության դեպքում համապատասխանության սերտիֆիկատի գործողության կասեցման վերաբերյալ որոշումը սերտիֆիկացման մարմինը կայացնում է հետեւյալ դեպքերում՝

ա) սերտիֆիկացման մարմնի հետ տեսչական հսկողության իրականացման վերաբերյալ պայմանագիր կնքելուց համապատասխանության սերտիֆիկատի սեփականատիրոջ հրաժարում.

բ) սերտիֆիկացման մարմնի հետ տեսչական հսկողության իրականացման վերաբերյալ պայմանագրով վճարում կատարելուց համապատասխանության սերտիֆիկատի սեփականատիրոջ հրաժարում.

գ) տեսչական հսկողության իրականացման ժամանակ սերտիֆիկացման մարմնի աշխատակիցների համար աշխատանքային պայմաններ (տարածքի, սույն հոդվածի 61-րդ հոդվածին համապատասխան անհրաժեշտ տեղեկատվության տրամադրում) ստեղծելուց համապատասխանության սերտիֆիկատի սեփականատիրոջ հրաժարում:

67. Եթե համապատասխանության սերտիֆիկատի սեփականատերը կես տարին գերազանցող ժամկետում չի արտադրում սերտիֆիկացված արտադրանք, ապա արտադրանքի թողարկումը կարող է իրականացվել միայն արտահերթ տեսչական հսկողության իրականացումից հետո:

68. Համապատասխանության սերտիֆիկատի գործողության կասեցման դեպքում.

ա) սերտիֆիկացման մարմինը՝

դրա մասին տեղեկացնում է ՄՄ անդամ պետությունների՝ երկաթուղային տրանսպորտի ոլորտում հսկողության եւ վերահսկողության գործառույթներ իրականացնող մարմիններին եւ շահագրգիռ կազմակերպություններին,

սահմանում է ուղղիչ միջոցառումների իրականացման ժամկետը եւ հսկում է համապատասխանության սերտիֆիկատի սեփականատիրոջ կողմից դրանց իրականացումը,

բ) համապատասխանության սերտիֆիկատի սեփականատերը՝

որոշում է սպառողի կողմից ուղարկված՝ սահմանված պահանջներից շեղումով արտադրանքի քանակը եւ տեղաբաշխումը,

սպառողներին եւ մյուս շահագրգիռ կազմակերպություններին ծանուցում է արտադրանքի օգտագործումը կասեցվելու վերաբերյալ եւ հաղորդում է հայտնաբերված թերությունների վերացման կարգը,

տեղում վերացնում է հայտնաբերված թերությունները կամ ապահովում է արտադրանքի վերադարձը՝ պատրաստողի կողմից լրացուցիչ մշակման համար:

69. Համապատասխանության սերտիֆիկատի գործողության կասեցման կամ դադարեցման, ինչպես նաեւ համապատասխանության սերտիֆիկատի գործողության վերականգնման վերաբերյալ տեղեկատվությունը սերտիֆիկացման մարմինը հայտնում է ՄՄ անդամ պետությունների՝ երկաթուղային տրանսպորտի ոլորտում հսկողության եւ վերահսկողության գործառույթներ իրականացնող մարմիններին եւ շահագրգիռ կազմակերպություններին ի գիտություն:

70. Արտադրանքը, որի համապատասխանության սերտիֆիկատի գործողությունը դադարեցվել է, սերտիֆիկացման անցկացման համար կարող է

կրկնակի հայտագրվել հայտատուի կողմից անհրաժեշտ ուղղիչ գործողությունների իրականացումից հետո: Կրկնակի սերտիֆիկացում անցկացնելու դեպքում սերտիֆիկացման մարմինը կարող է հաշվի առնել նախորդ սերտիֆիկացման դրական արդյունքները:

Հոդված 7. Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով մականշումը

1. Անվտանգությանը ներկայացվող պահանջներին համապատասխանող եւ ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգի 6-րդ հոդվածի համաձայն համապատասխանության հավաստման ընթացակարգ անցած արտադրանքը պետք է ունենա մականշվածք՝ ՄՄ անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով:

2. ՄՄ անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով մականշումը կատարվում է մինչեւ շուկայում այն շրջանառության մեջ դնելը:

3. ՄՄ անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանը զետեղվում է արտադրանքի յուրաքանչյուր միավորի վրա:

ՄՄ անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանը զետեղվում է անմիջապես արտադրատեսակի, ինչպես նաեւ դրան կցվող շահագործման փաստաթղթերի վրա:

ՄՄ անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանը զետեղվում է արտադրանքի շահագործման ամբողջ ընթացքում պարզ եւ հստակ պատկերում ապահովող ցանկացած եղանակով:

4. Թույլատրվում է ՄՄ անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանի զետեղումը միայն փաթեթվածքի վրա եւ դրան կցվող շահագործման փաստաթղթերում նշելը, եթե այն անհնար է զետեղել

անմիջապես արտադրանքի վրա՝ ելնելով դրա կոնստրուկցիայի առանձնահատկություններից:

5. ՄՄ անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով արտադրանքի մակնշումը վկայում է արտադրանքի նկատմամբ կիրառվող եւ ՄՄ անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանի զետեղում նախատեսող՝ ՄՄ բոլոր տեխնիկական կանոնակարգերի պահանջներին դրանց համապատասխանության մասին:

Հոդված 8. Պաշտպանության մասով վերապահումը

1. ՄՄ անդամ պետությունները պարտավոր են ձեռնարկել բոլոր միջոցները՝ արտադրանքը ՄՄ մաքսային տարածքում շրջանառության մեջ դնելը սահմանափակելու, արգելելու, ինչպես նաեւ մարդու կյանքի ու առողջության, գույքի համար վտանգ ներկայացնող արտադրանքը շուկայից հանելու համար:

2. Մաքսային միության անդամ պետության իրավասու մարմինը պարտավոր է Հանձնաժողովին եւ Մաքսային միության մյուս անդամ պետությունների իրավասու մարմիններին ծանուցել ընդունված որոշման մասին՝ նշելով տվյալ որոշումն ընդունելու պատճառները եւ տրամադրելով ապացույցներ, որոնցով պարզաբանվում է տվյալ միջոցը ձեռնարկելու անհրաժեշտությունը:

3. Պաշտպանության մասով հոդվածի կիրառման համար հիմք կարող են լինել հետեւյալ դեպքերը՝

ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգի 4-րդ հոդվածը չկատարելը,

ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգի հետ փոխկապակցված՝ ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգի 5-րդ հոդվածում նշված ստանդարտների ոճ ճիշտ կիրառումը, եթե այդ ստանդարտները կիրառվել են,

ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգի 6-րդ հոդվածում շարադրված

կանոնները չկատարելը,

համապատասխանության պարտադիր հավաստման իրականացումը ՄՄ սերտիֆիկացման մարմինների եւ փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) միասնական ռեեստրում չընդգրկված կամ սահմանված չափորոշիչներին չհամապատասխանող՝ համապատասխանության գնահատման մարմինների կողմից,

արտադրանքը շուկայում շրջանառության մեջ դնելն արգելելու այլ պատճառներ:

4. Եթե ՄՄ մյուս անդամ պետությունների իրավասու մարմինները բողոք են ներկայացնում սույն հոդվածի 1-ին կետում նշված որոշման դեմ, ապա Մաքսային միության հանձնաժողովն անհապաղ անցկացնում է խորհրդակցություն Մաքսային միության բոլոր անդամ պետությունների իրավասու մարմինների հետ՝ փոխադարձ ընդունելի որոշում կայացնելու նպատակով:

Հավելված 1

«Երկաթուղային շարժակազմի
անվտանգության մասին» ՄՄ
տեխնիկական կանոնակարգի

ՑԱՆԿ**ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՇԱՐժԱԿԱԶՄԻ ԵՎ ԴՐԱ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՄԱՍԵՐԻ****I. Երկաթուղային շարժակազմ**

		Դիրքի ծածկագիրը՝ ըստ ՄՄ ԱՏԳ ԱԱ-ի
1.	Վագոններ՝ բունկեր տիպի	8606
2.	Վագոններ իզոթերմիկ	8606 91
3.	Վագոններ ծածկված	8606
4.	Վագոններ՝ ուղեւորատար, մայրուղային, գնացքարշային	86
5.	Վագոն-ինքնաթափեր	86
6.	Վագոն-ցիստեռներ	8606 10 000
7.	Վագոններ՝ լայն ռելսամեջով, արդյունաբերության համար	86
8.	Դիզելային գնացքներ, ավտոմատրիսներ (ռելսային ավտոբուսներ), դրանց վագոնները	8602 8603 8605 00 000 8606
9.	Դիզելային էլեկտրագնացքներ, դրանց վագոնները	86
10.	Կառամատույցներ	8606
11.	Կիսավագոններ	8606
12.	Հատուկ ոչ ինքնագնաց երկաթուղային շարժակազմ	8604
13.	Հատուկ ինքնագնաց երկաթուղային շարժակազմ	8604
14.	Ջերմաքարշեր, գազատուրբաքարշեր՝ մայրուղային, մանեւրային եւ արդյունաբերական	8602
15.	Փոխակրիչներ երկաթուղային	8606
16.	Էլեկտրաքարշեր մագիստրալային՝ հաստատուն հոսանքի, փոփոխական հոսանքի, երկակի համակարգով (հաստատուն եւ փոփոխական), այլ	8601

		Դիրքի ծածկագիրը՝ ըստ ՄՄ ԱՏԳ ԱԱ-ի
17.	Էլեկտրագնացքներ՝ հաստատուն հոսանքի, փոփոխական հոսանքի, երկակի համակարգով (հաստատուն եւ փոփոխական), դրանց վագոնները	8601 8603 8605 00 000 8606

II. Երկաթուղային շարժակազմի բաղկացուցիչ մասեր

		Դիրքի ծածկագիրը՝ ըստ ՄՄ ԱՏԳ ԱԱ-ի
1	Ավտոմատ կարգավորիչ՝ արգելակի լծակային փոխանցիչի (ինքնակարգավորիչ)	8607
2	Ավտոմատ կայանման արգելակ՝ երկաթուղային շարժակազմի	8607
3	Ապարատներ բարձրավոլտ՝ կարճ միակցումից երկաթուղային շարժակազմի պաշտպանության եւ հսկողության	8535
4	Հեծան զսպանակավորված՝ բեռնատար վագոնի	8607
5	Կալանդներ՝ երկաթուղային շարժակազմի համար	8607
6	Կալուններ՝ մագնիսառելսային արգելակի	8607
7	Կալուններ՝ երկաթուղային շարժակազմի արգելակակոճղակների	8607
8	Կալուններ՝ երկաթուղային շարժակազմի սկավառակային արգելակների արգելակային մակադրակների	8607
9	Արգելակների բլոկավորում	8607
10	Փականային պարաիչներ եւ գերլարման սահմանափակիչներ՝ էլեկտրաշարժակազմի համար	8535
11	Օդաբաշխիչներ	8607
12	Օժանդակ էլեկտրական մեքենաներ՝ երկաթուղային շարժակազմի համար (1 կՎ-ից ավելի)	8501
13	Անջատիչներ՝ ավտոմատ, արագագործ եւ գլխավոր անջատիչներ՝ էլեկտրաշարժակազմի համար	8535
14	Բարձրավոլտ ապարատային արկղեր՝ ուղեւորատար վագոնների համար	85
15	Բարձրավոլտ միջվագոնային միացքներ (վարդակ եւ խրոցակ՝ միասին)	8535
16	Բարձր ամրության արտադրատեսակներ՝ ապակեպատման, անվտանգ, երկաթուղային	7007 7007 11 100

		Դիրքի ծածկագիրը՝ ըստ ՄՄ ԱՏԳ ԱԱ-ի
	շարժակազմի (քարշային եւ շարժիչավագոնային շարժակազմի մեքենավարի խցիկներ)	7007 21 7007 29 7008 00
17	Հիդրավլիկական տատանամեղմիչներ՝ երկաթուղային շարժակազմի	8607
18	Սկավառակներ արգելակային՝ երկաթուղային շարժակազմի համար	8607
19	Արտադրատեսակներ՝ ռետինե, խցարար, երկաթուղային շարժակազմի արգելակային օդաճնշման համակարգի համար (կափույրների դիաֆրագմաներ, խցողակներ, օձիքներ, խցիչներ, միջադիրներ)	4016
20	Լիսեռներ կարդանային՝ ջերմաքարշերի եւ դիզելային գնացքների, ռելսային ավտոբուսների, դիզելային էլեկտրագնացքների գլխավոր շարժաբերի	8483
21	Սեպ՝ ինքնակցիչի քարշային անուրի	73
22	Կոմպրեսորներ՝ երկաթուղային շարժակազմի համար	8607
23	Անիվներ՝ ատամնավոր, գլանաձեւ, երկաթուղային շարժակազմի քարշային փոխանցիչների	8607
24	Անիվներ բաղադրյալ, պատրաստի՝ գնացքաքարշերի եւ շարժիչավագոնային շարժակազմի	8607
25	Անիվներ ամբողջագլոցված՝ երկաթուղային շարժակազմի համար	8607
26	Անվազույգեր վագոնային	8607
27	Անվազույգեր գնացքաքարշերի եւ շարժիչավագոնային շարժակազմի	8607
28	Անվազույգեր՝ հատուկ երկաթուղային շարժակազմի համար	8607
29	Կոճղակներ արգելակման, կոմպոզիցիոն՝ երկաթուղային շարժակազմի համար	8607
30	Կոճղակներ արգելակման, բաղադրյալ (չուգունե- կոմպոզիցիոն)՝ երկաթուղային շարժակազմի համար	8607
31	Կոճղակներ արգելակման, չուգունե՝ երկաթուղային շարժակազմի համար	8607
32	Հպարկիչներ՝ էլեկտրաօդաճնշական եւ էլեկտրամագնիսական, բարձրավոլտ	8535
33	Իրան ինքնակցիչի	8607
34	Բազկաթոռներ մեքենավարների՝ գնացքաքարշերի, շարժիչավագոնային շարժակազմի եւ հատուկ երկաթուղային շարժակազմի համար	9401

		Դիրքի ծածկագիրը՝ ըստ ՄՄ ԱՏԳ ԱԱ-ի
35	Բազկաթոռներ ուղեւորների՝ շարժիչավագոնային շարժակազմի եւ գնացքաքարշային ուղեւորատար վագոնների համար	9401
36	Թափքեր գնացքաքարշերի եւ շարժիչավագոնային շարժակազմի	86 90 100 91
37	Մեխանիզմ արքանային՝ սկավառակային արգելակի	8607
38	Մակադրակներ՝ սկավառակային արգելակի	8607
39	Սոնիներ՝ վագոնային, պատրաստի	8607
40	Սոնիներ՝ գնացքաքարշային եւ շարժիչավագոնային շարժակազմի, պատրաստի	8607
41	Սոնիներ պատրաստի՝ հատուկ երկաթուղային շարժակազմի համար	8607
42	Սոնիներ կոպտամշակ՝ երկաթուղային շարժակազմի համար	8607
43	Փոխանցիչներ հիդրավլիկական՝ ջերմաքարշերի եւ դիզելային գնացքների համար	8412
44	Առջեւի եւ հետեւի հենակներ՝ ինքնակցիչի	8607
45	Փոխարկիչներ եւ անջատիչներ բարձրավոլտ՝ երկաթուղային շարժակազմի համար	85
46	Կլանող ապարատ՝ ինքնակցիչի	86
47	Առանցքակալներ՝ գլոցման, հոլովակավոր, երկաթուղային շարժակազմի առանցքակալատուփերի համար	8482
48	Ապահովիչներ բարձրավոլտ՝ երկաթուղային շարժակազմի համար	85
49	Կերպափոխիչներ՝ ստատիկ, քարշային եւ ոչ քարշային, երկաթուղային շարժակազմի	85
50	Կերպափոխիչներ էլեկտրամեքենայական՝ երկաթուղային շարժակազմի համար	8501
51	Շարժաբեր՝ մագնիսառեյսային արգելակի	8607
52	Հակասայթաքման սարքավորում՝ երկաթուղային շարժակազմի	85
53	Զսպանակներ՝ երկաթուղային շարժակազմի զսպանավոր կախման	7320
54	Զատիչներ, կարճամիակցիչներ, բաժանիչներ, հողակցիչներ՝ բարձրավոլտ, գնացքաքարշերի եւ շարժիչավագոնային շարժակազմի համար	85
55	Շրջանակ կողային՝ բեռնատար վագոնի սայլակի	8607
56	Շրջանակ՝ ուղեւորատար վագոնի սայլակի	8607
57	Ռեակտորներ եւ ռեակտորային սարքավորումներ՝	85

		Դիրքի ծածկագիրը՝ ըստ ՄՄ ԱՏԳ ԱԱ-ի
	Էլեկտրաքարշերի եւ էլեկտրագնացքների համար	
58	Ռեզերվուարներ օդային՝ երկաթուղիների վագոնների ավտոմատ արգելակների համար	73 7310
59	Ռեզերվուարներ օդային՝ քարշային շարժակազմի համար	73 7310
60	Ռետինակորդային թաղանթներ՝ էլեկտրագնացքների քարշային շարժաբերի կցորդիչների	40 8443
61	Ռեզիստորներ՝ գործարկման, էլեկտրական արգելակի, տատանամեղմիչային	85
62	Ռելեներ էլեկտրամագնիսական եւ էլեկտրոնային՝ միջանկյալ, հոսանքի, այդ թվում՝ տարբերական, լարման, ժամանակի, գերբեռնման, ռելեական տվիչներ՝ ոչ էլեկտրական պարամետրերի (ջերմաստիճանի, ճնշման, մակարդակի) հսկման.	8535
63	Չսպաններ թերթավոր՝ երկաթուղային շարժակազմի համար	7320
64	Ճկափողեր միացման՝ երկաթուղային շարժակազմի արգելակների համար	4009
65	Ապակեմաքրիչներ՝ գնացքաքարշերի, շարժիչավագոնային շարժակազմի եւ ինքնագնաց երկաթուղային շարժակազմի համար	84 79 89 970 9
66	Կցիչ՝ ներառյալ ինքնակցիչը	8607
67	Սայլակներ երկսոնի՝ բեռնատար վագոնների համար	8607
68	Սայլակներ՝ ուղեւորատար վագոնների եւ շարժիչավագոնային երկաթուղային շարժակազմի կցովի վագոնների	8607
69	Տիֆոններ՝ գնացքաքարշերի եւ շարժիչավագոնային շարժակազմի համար	83 06 10 000 0
70	Արգելակման ծորաններ մեքենավարի	8607
71	Արգելաձողեր՝ արգելակի լծակային փոխանցիչի, մայրուղային երկաթուղիների բեռնատար վագոնների սայլակների	8607
72	Քարշային էլեկտրաշարժիչներ՝ էլեկտրաքարշերի եւ էլեկտրագնացքների համար	8501
73	Քարշային անուր՝ ինքնակցիչի	73 86
74	Բեռնվածքից ելնելով՝ արգելակման ուժի ավտոմատ կարգավորման սարքվածք (ավտոմատ ռեժիմ)	85
75	Սարքվածներ կառավարման, հսկողության եւ	85

		Դիրքի ծածկագիրը՝ ըստ ՄՄ ԱՏԳ ԱԱ-ի
	անվտանգության, ծրագրային միջոցներ՝ երկաթուղային շարժակազմի	
76	Կենտրոններ՝ անվավոր, գլոցված, սկավառակային, երկաթուղային շարժակազմի համար	8607
77	Կենտրոններ՝ անվավոր, ծուլված, երկաթուղային շարժակազմի համար (փորձաթերթեր, պատրաստի)	8607
78	Գլաններ արգելակային՝ երկաթուղային շարժակազմի համար	8607
79	Ճուլկիներ արգելակակոճղակների՝ մայրուղային երկաթուղիների վագոնների համար	8607
80	Գլխավոր շարժաբերի եւ քարշային սարքավորման էլեկտրաշարժիչներ եւ գեներատորներ՝ ջերմաքարշերի համար	8501
81	Էլեկտրաօդաջեռուցիչներ՝ ուղեւորատար վագոնների եւ էլեկտրագնացքների ջեռուցման համակարգերի համար	8516
82	Էլեկտրատաքացուցիչներ բարձրավոլտ՝ ուղեւորատար վագոնների հեղուկային ջեռուցման համակարգերի համար	85
83	Էլեկտրասարքավորում՝ ջերմաքարշերի, դիզելային գնացքների, ռելսային ավտոբուսների եւ ավտոմատրիսների համար	85
84	Էլեկտրասարքավորում ցածրավոլտ՝ երկաթուղային շարժակազմի համար. Կոնտրոլերներ ցածրավոլտ, անջատիչներ, ռելեներ էլեկտրամագնիսական (պաշտպանության, միջանկյալ, ժամանակի եւ տարբերական)	85
85	Էլեկտրասարքավորում՝ ուղեւորատար վագոնների, էլեկտրագնացքների	85
86	Էլեկտրավառարաններ՝ ուղեւորատար վագոնների եւ էլեկտրագնացքների ջեռուցման համակարգերի համար	85
87	Ուղեւորատար վագոնների լուսավորության համակարգերի տարրեր	85

Հավելված 2

«Երկաթուղային շարժակազմի
անվտանգության մասին» ՄՄ
տեխնիկական կանոնակարգի

ՑԱՆԿ**ՍԵՐՏԻՖԻԿԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՇԱՐՇԱԿԱԶՄԻ**

		Դիրքի ծածկագիրը՝ ըստ ՄՄ ԱՏԳ ԱԱ-ի
1.	Վագոններ՝ բունկեր տիպի	8606
2.	Վագոններ իզոթերմիկ	8606 91
3.	Վագոններ ծածկված	8606
4.	Վագոններ՝ ուղեւորատար, մայրուղային, գնացքարշային	86
5.	Վագոն-ինքնաթափեր	86
6.	Վագոն-ցիստեռներ	8606 10 000
7.	Վագոններ՝ լայն ռելսամեջով, արդյունաբերության համար	86
8.	Դիզելային գնացքներ, ավտոմատրիսներ (ռելսային ավտոբուսներ), դրանց վագոնները	8602 8603 8605 00 000 8606
9.	Դիզելային էլեկտրագնացքներ, դրանց վագոնները	86
10.	Կառամատուցներ	8606
11.	Կիսավագոններ	8606
12.	Հատուկ ոչ ինքնագնաց երկաթուղային շարժակազմ	8604
13.	Հատուկ ինքնագնաց երկաթուղային շարժակազմ	8604
14.	Ջերմաքարշեր, գազատուրբաքարշեր՝ մայրուղային, մանեւրային եւ արդյունաբերական	8602
15.	Փոխակրիչներ երկաթուղային	8606
16.	Էլեկտրաքարշեր մագիստրալային՝ հաստատուն հոսանքի, փոփոխական հոսանքի, երկակի համակարգով (հաստատուն եւ փոփոխական), այլ	8601
17.	Էլեկտրագնացքներ՝ հաստատուն հոսանքի, փոփոխական հոսանքի, երկակի համակարգով (հաստատուն եւ փոփոխական), դրանց վագոնները	8601 8603 8605 00 000 8606

Հավելված 3

«Երկաթուղային շարժակազմի
անվտանգության մասին» ՄՄ
տեխնիկական կանոնակարգի

ՑԱՆԿ

**ՍԵՐՏԻՖԻԿԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՇԱՐՇԱԿԱԶՄԻ
ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՄԱՍԵՐԻ**

		Դիրքի ծածկագիրը՝ ըստ ՄՄ ԱՏԳ ԱԱ-ի
1	Ապարատներ բարձրավոլտ՝ կարճ միակցումից երկաթուղային շարժակազմի պաշտպանության եւ հսկողության	8535
2	Հեծան զսպանակավորված՝ բեռնատար վագոնի	8607
3	Կայանդներ՝ երկաթուղային շարժակազմի համար	8607
4	Փականային պարպիչներ եւ գերլարման սահմանափակիչներ՝ էլեկտրաշարժակազմի համար	8535
5	Օդաբաշխիչներ	8607
6	Անջատիչներ՝ ավտոմատ, արագագործ եւ գլխավոր անջատիչներ՝ էլեկտրաշարժակազմի համար	8535
7	Բարձր ամրության արտադրատեսակներ՝ ապակեպատման, անվտանգ, երկաթուղային շարժակազմի (քարշային եւ շարժիչավագոնային շարժակազմի մեքենավարի խցիկներ)	7007 7007 11 100 7007 21 7007 29 7008 00
8	Սկավառակներ արգելակային՝ երկաթուղային շարժակազմի համար	8607
9	Կոմպրեսորներ՝ երկաթուղային շարժակազմի համար	8607
10	Անիվներ՝ ատամնավոր, գլանաձեւ, երկաթուղային շարժակազմի քարշային փոխանցիչների	8607
11	Անիվներ բաղադրյալ, պատրաստի՝ գնացքաքարշերի եւ շարժիչավագոնային շարժակազմի	8607
12	Անիվներ ամբողջագրոցված՝ երկաթուղային շարժակազմի համար	8607
13	Անվագույգեր վագոնային	8607

		Դիրքի ծածկագիրը՝ ըստ ՄՄ ԱՏԳ ԱԱ-ի
14	Անվազույգեր գնացքաքարշերի եւ շարժիչավագոնային շարժակազմի	8607
15	Անվազույգեր՝ հատուկ երկաթուղային շարժակազմի համար	8607
16	Կոճղակներ արգելակման, կոմպոզիցիոն՝ երկաթուղային շարժակազմի համար	8607
17	Կոճղակներ արգելակման, բաղադրյալ (չուգունե-կոմպոզիցիոն)՝ երկաթուղային շարժակազմի համար	8607
18	Կոճղակներ արգելակման, չուգունե՝ երկաթուղային շարժակազմի համար	8607
